

**ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄԻ
ԷԶԵՐՈՒՄ**

(ՆՈՒԻՐԻՈՒՄ Է ՀԱՆԴԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 30ԱՄԵԱԿԻՆ)
ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

30 տարի առաջ՝ 1970ին, Բէյրութում լոյս տեսաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի առաջին գիրքը: Հանդէսը գալիս էր ըստ արժանուոյն համարելու այն նշանաւոր պարբերականների յաջորդութիւնը, որոնք անջնջելի հետք են թողել հայագիտութեան ուղեծիրում, ինչպիսիք են Բագմալէպը, Հանդէս ամսօրեան, Բանասէրը, Պատմաբանասիրական Հանդէսը, Տեղեկագիրը, Լրաբերը, Բանբեր Երեւանի համալսարանին, Բանբեր Հայաստանի արխիւներին, Նորքը, եւ այլն: Անմիջապէս Հանդէսն իր շուրջը համախմբեց Սփիւռքի եւ Հայրենիքի պատմաբան շատ կարող ուժերի: Այն դարձաւ մի հաճելի ժամադրափայլ, ուր տարիների իրենց ստեղծագործական պրպտումների արդիւնքները հրապարակեցին տարբեր սերունդների հայ եւ օտար պատմաբաններ: Այս ընթացքում Հանդէսը կարողացաւ պահպանել իր սեփական «ես»ը, ունենալ իր ուրոյն գիծը, առանձնայատուկ մօտեցումները, որոնց բոլորի հիմքում ընկած են գիտականութիւնն ու պատմականութիւնը, անաչառութիւնն եւ ճշմարտութիւնը:

Հանդէսը կարողացաւ զարգացնել հայ պատմագիտութեան լաւագոյն աւանդութիւնները: Նրա էջերում առաջինն են բարձրացուել վիճալարոյց բազում հարցեր, իրենց լուծումն են ստացել շատ խնդիրներ: Ինչ-որ չափով Հանդէսը ուղեցոյց է դարձել նաեւ պատմագիտական առանձին թեմաների յետագայ մշակման համար:

Չափազանց դժուարին է մի ակնարկում գնահատել այն հսկայական, ծաւալուն աշխատանքը, որ կատարել է Հանդէսը 30 տարիների ընթացքում հայ պատմագիտութեան զարգացման բնագաւառում: Ուստի որոշեցինք կատարուածը ներկայացնել թուուցիկ ակնարկի ձեւով, որն, անշուշտ, միայն մօտաւոր գաղափար կարող է տալ ծաւալւած աշխատանքների մասին: Անհրաժեշտ համարեցինք Հանդէսում տպագրուած պատմագիտական նիւթերը ներկայացնել ըստ պատմաչրջանների՝ Հին եւ Միջին դարեր, Նոր եւ Նորագոյն ժամանակներ: Բնականաբար իւրաքանչիւր պատմաչրջանի ներսում եւս կատարուել

է իւրօրինակ ստորաբաժանում՝ հիմք ընդունելով ժամանակագրական սկզբունքն ու թեմատիկան:

Զուտ քաղաքական պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւններից բացի, *Հանդէսի* էջերում տպագրուել են նաեւ պատմագիտութեան օժանդակ առարկաներին վերաբերող բազմաթիւ յօդուածներ, որոնք, ինչպէս քանակով, այնպէս էլ նշանակութեամբ, չեն գիջում առաջին խմբի յօդուածներին: Աշխատանքի երկրորդ բաժնում, ըստ հերթականութեան ներկայացրել ենք հայոց պատմութեան աղբիւրագիտութեանը, պատմագրութեանը, հայկական սփիւռքի եւ գաղթավայրերի, մամուլի պատմութեանը, պատմական աշխարհագրութեանն ու տեղագրութեանը, հայկական դրամագիտութեանը նըւիրուած ուսումնասիրութիւնները: Անշուշտ, նման բաժանումը երբեմն պայմանական է եւ հասկանալի է, որ ուսումնասիրութիւններից մի քանիսը կարող էին դասակարգուել ոչ թէ այս, այլ ուրիշ խմբում, իսկ մի քանիսն էլ երեւի դուրս են մնացել ընդհանուր որեւէ շրջանակից: Այնուհանդերձ, թւում է, թէ յաջողուել է առաջարկել մի օրինակելի ուրուագիծ, ըստ որի ընթերցողներին ենք ներկայացնում այն հսկայական տքնաջան ու շնորհակալ աշխատանքը, որ կատարում է *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* հայ պատմագիտական մտքի անդաստանում՝ վերջին 30 տարիների ընթացքում:

Լայն եւ ընդգրկուն է հարցերի այն ծիրը, որոնք լոյս են տեսել *Հանդէսի* էջերում՝ հայ ժողովրդի պատմութեան վաղնջական ժամանակներից մինչեւ արդի պատմութեան հիմնահարցերը, շուրջ 4500 տարուայ ժամանակաշրջանի ընդգրկմամբ: Անշուշտ, ինչպէս եւ սպասելի էր, յօդուածների հիմնական խումբը վերաբերում է նոր եւ նորագոյն պատմութեանը: Ծեշտելով այս իրողութիւնը, այնուհանդերձ, նշելի է, որ *Հանդէսն* անուշադրութեան չի մատնել նաեւ հին եւ միջնադարեան Հայաստանի պատմութեան կարեւորագոյն հիմնախնդիրները:

Հանդէսն անդրադարձել է հայոց պատմագիտութեան հանգուցային խնդիրներից հայ ժողովրդի ծագման եւ վաղ հայկական պետականութիւնների կազմաւորման հիմնահարցերին: Յայտնի է, որ պատմաբանների մի խումբ (Նիկողայոս Ադոնց, Յակոբ Մանանդեան, Աստուածատուր Խաչատուրեան, Խաչիկ Սամուէլեան եւ այլք) համերաշխուել են հնդեւրոպական այն տեսութեանը, ըստ որի հայերի նախնիները եղել են միայն արմէնները, որոնք մ.թ.ա. ժ.թ. դարում դուրս գալով Բալկանեան թերակղզուց եկել են Փոքր Ասիա, իսկ մ.թ.ա. է. դ. վերջում ներխուժել են Հայկական լեռնաշխարհ: Այստեղ ձուլելով տեղաբնիկ ցեղախմբերին՝ արմէնները ամրապնդուել են իրենց նոր հայրենիքում: Պատմաբանների մէկ այլ խումբ (Գրիգոր Ղափանցեան,

Բարկէն Առաքելեան եւ այլք) զարգացրել է այն տեսակէտը, որ հայ ժողովուրդը կազմաւորուել է տարրեր ցեղախմբերի միաձուլումից: Միաւորող հիմնական բաղադրիչը եղել է Հայասա ցեղախումբը, որն էլ նոր կազմաւորուած ժողովրդին տուել է իր անունը: Նշուած երկու տեսակէտերն էլ ունեցել են իրենց համակիրներն ու հակառակորդները: Վերջին տարիներին աւելի ու աւելի տիրապետող է դառնում այն տեսակէտը, որ հայերը տեղաբնիկներ են եւ ի սկզբանէ ապրել են Հայկական լեռնաշխարհում, որը եղել է նրանց ոչ միայն հայրենիքը, այլեւ նախահայրենիքը:

Այս բանգաւառում ստեղծագործող արդի պատմաբաններից առաւել արդիւնաւէտը Արտակ Մովսիսեանն է, որը երկու ուշագրաւ յօդուած է տպագրել Հանդէսի էջերում: Առաջին յօդուածը, որ կրում է «Արմանի-Արմի երկիրն ըստ աքաղական եւ հրաբանական աղբիւրների (պատմա-աշխարհագրական ակնարկ)» խորագիրը, նուիրուած է հնագոյն այդ սկզբնաղբիւրներում հանդիպող Արմանի երկրի տեղագրութեանը (տե՛ս՝ ԺԳ., 1993, էջ 113-127): Յօդուածագիրը համոզիչ փաստերով նշուած երկիրը տեղադրում է Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքում: Արմանի երկրի մասին առաջին յիշատակութիւնները վերաբերում են մ.թ.ա. ԻԴ. դարին: Մովսիսեանը ներկայացնում է Արմանի, Արմի, Արմինա ու Արմենիա տեղանունները եւ գալիս այն եզրակացութեան, որ Արմանին մ.թ.ա. ԻԴ. դ. սկսած սեմական ցեղերի կողմից Հայկական լեռնաշխարհին տրուած հաւաքական անուանումն է, որով արմէնների եկուորութեան տեսակէտը խստագոյնս մերժուում է եւ ապացուցուում, որ նրանք անյիշելի ժամանակներից ի վեր եղել են Հայկական լեռնաշխարհի բնիկները: «Արամ երկիրը» յօդուածում (ԺԷ., 1997, էջ 69-80) Մովսիսեանը՝ մանրակրկիտ տեղագրական քննութեան ենթարկելով Շումէրի եւ Աքադի արքայ Նարամ-Սինի (մ.թ.ա. ԻԳ. դ.) դէպի հիւսիս ձեռնարկած արշաւանքի երթուղին՝ գալիս է այն եզրակացութեան, որ աքաղական սկզբնաղբիւրներում յիշատակուած Արամ կոչուող երկիրը պէտք է տեղադրել Հայկական լեռնաշխարհում: Ուսումնասիրողը խիստ հաւանական է համարում այն, որ Արմենիա անուան հիմքը, նախածելը «Արամ»ն է:

Հայ ժողովրդի ծագման եւ կազմաւորման հիմնահարցի առնչութեամբ որոշ գիտնականներ անդրադարձել են նաեւ հայ-սումերական յարաբերութիւնների խնդրին (Պաշիկ Սամուէլեան, Գէորգ Ջահուկեան, Գ. Կ. Կիւլպենկեան, Մարտիրոս Գաւուքչեան, Ռաֆայէլ Իշխանեան եւ այլք): Յայտնի է, որ սումէրների լեզուն եւ մշակոյթի որոշ գծեր նկատելի հետք են թողել հայերէնի վրայ: Ելնելով այս իրողութիւնից՝ գիտնականները եզրակացրել են, թէ սումէրները ինչ-որ ժամանակ բնակուել են Հայկական լեռնաշխարհում եւ իրենց լեզուն ու

կրօնը պարտադրել բնիկ ժողովրդին՝ հայերին: Ահա այս բարդ հարցի քննութեանն է նուիրուած Հանդէսի առաջին խմբագիր Երուանդ Քասունու «Սումէրներու եւ հայ-սումէրական յարաբերութիւններու հարցի մասին» խիստ շահեկան յօդուածը (Ը., 1980, էջ 209-232): Քննելով տուեալ հարցի վերաբերեալ գոյութիւն ունեցող բոլոր յայտնի փաստերը, պատմաբանը եկել է այն եզրակացութեան, որ սումէրների Հայկական լեռնաշխարհում լինելու վարկածը գիտականօրէն չի հիմնաւորուած: Հայոց լեզուի եւ հայերի հին կրօնական հաւատալիքների մէջ սումէրական ազդեցութիւնը Քասունին բացատրում է հուրիական ցեղերի խաղացած միջնորդ դերով:

Անսքող հետաքրքրութեամբ է ընթերցւում Սերգէյ Ումառեանի «Արգոնաւորդները եւ Հայաստանը» նիւթը (Ժ., 1982-84, էջ 95-110): Յայտնի է, որ հայերի եկուոր ժողովուրդ լինելու տեսակէտի կողմնակիցները յենուած են նաեւ հին յունական յայտնի առասպելի այն վկայութեան վրայ, որ Արգոնաւորդներից մէկի՝ Արմենոս Թեսալացու անունից են ծագել Արմենիա եւ Արմէն անուանումները: Հերքելով այս տեսակէտը՝ յօդուածագիրը համերաշխուած է հետազօտողների այն խմբի հետ, որոնց համաձայն Արգոնաւորդների առասպելի ստեղծումից (մ.թ.ա. ԺԱ. դար) դեռեւս շատ աւելի վաղ՝ Պ. հազարամեակում, Հայկական լեռնաշխարհի բնիկները հարեւան ժողովուրդների կողմից արդէն անուանուել են «արման» կամ «արմէն» անուններով: Անդրադառնալով «հայ» եւ «արմէն» ցեղանունների բացատրութեանը, հեղինակը գտնում է, որ երկու անուանումներն էլ աղբրս ունեն մետաղամշակութեան հետ եւ առարկայականօրէն ունեցել են «պղնձագործ» իմաստը: Մ.թ.ա. Ե. հազարամեակում հնդեւրոպական մայր ժողովրդից անջատուած հայկական ցեղախմբերը եղել են առաջին պղնձագործներից: Մետաղագործ այդ ժողովրդին հարաւից սեմական ցեղերն անուանել են արման, հիւսիսից իրերական ցեղերը՝ սոմեխի, արեւելքից իրանական ցեղերը՝ արմանիկ, արեւմուտքից յունական ցեղերը՝ արմէն, իսկ փոքրասիական ցեղերը՝ հայ: Հայ-արմէնները եղել են Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ հնդեւրոպական ժողովուրդներից մէկը: Նրա բոլոր անուանումները (հայ, արմէն եւլն.) արտայայտում են նոյն՝ «պղնձագործ» բովանդակութիւնը:

Հայկական հնագոյն տոհմերից մէկի՝ Երուանդունիների ծագման եւ նրանց տիրոջիւնների տեղագրութեան յուժ հետաքրքրական հարցին է անդրադարձել Սարո Սարոյեանն իր «Երուանդունիների եւ Բագրատունիների ծագման հարցի շուրջը» յօդուածում (ԺԹ., 1999, էջ 71-90): Հեղինակը մերժում է պատմագիտութեան մէջ արտայայտուած այն տեսակէտերը, թէ իբր Երուանդունիներն ունեցել են իրանական կամ բակտրիական ծագում, եւ գոյութիւն ունեցող սկզբնաղբիւրների

քննական վերլուծութեան հիման վրայ ցոյց տալիս, որ Հայկական այս հինաւուրց տոհմը բնակուել է Հայկական լեռնաշխարհի հարաւում՝ Զարասպ լեռան շրջանում՝ Բագաստանում, որը մ.թ.ա. Թ.-Չ. դարերում ամբողջութեամբ մաս է կազմել Ուրարտուին: Հեղինակի համոզմամբ, ազգակից երկու տոհմերը՝ Երուանդունիներն ու Բագրատունիներն, արդէն ուրարտական տիրապետութեան վերջին շրջանում հաստատուել էին հայոց միջնաշխարհում: Այդ կապակցութեամբ Սարոյեանն ոչ միայն մատնանշում է երկու տոհմերի դէպի հայոց միջնաշխարհ տարածուելու երթուղին, այլև կտրականապէս ու համոզիչ մերժում Բագրատունիների հրէական ծագման մասին գոյութիւն ունեցող վարկածները:

Հայ ժողովրդի պատմութեան յաջորդ՝ Արտաշէսեան պատմաւրջանի վերաբերեալ միակ յօդուածի հեղինակը դրամագէտ Պերճ Սապպաղեանն է: Ուսումնասիրողը՝ «Լուկուլլոսի գինուորներուն թիւը Տիգրանակերտի ճակատամարտին (ըստ դրամագիտական տուեաներու)» յօդուածում (Դ., 1973, էջ 97-102), անդրադարձել է մ.թ.ա. 69ին դէպի Հայաստան ձեռնարկած հռոմէական զօրավար Լուկուլլոսի բանակի արշաւանքի առանձին մանրամասներին: Յօդուածագիրը հերքել է Հռոմի համակիր աղբիւրների (Պլուտարքոս, Ապպիանոս եւ այլք) այն խիստ չափազանցուած պնդումը, որի համաձայն հռոմէական 15 հազարանոց բանակը ջախջախել է իրենից քսան անգամ դերազանցող Հայկական 300 հազարանոց զօրքին: Հիմք ընդունելով դրամագիտական տուեանները՝ ռազմատուգանքը, որ վճարել է Տիգրան Բ. Մեծը (մ.թ.ա. 95-55) հռոմէացիներին, Սապպաղեանը համօրէն ցոյց է տալիս, որ Լուկուլլոսի գինուորների թիւը գրեթէ համազօր է եղել Հայկական 80 հազարանոց բանակին ու կազմել է ճիշդ 63.892 հոգի:

Հայ ժողովրդի միջին դարերի պատմութեան հարցերին Հանդէսն անդրադարձել է աւելի լայնօրէն: Ինչպէս նախորդ, այնպէս էլ այս պատմաւրջանին վերաբերող յօդուածները նուիրուած են պատմագիտութեան մէջ սակաւ ուշադրութեան արժանացած կամ խիստ վիճաբանութիւնների տեղիք տուած հարցերին: Հետաքրքրութեամբ է ընթերցուում Հանդէսի մնայուն աշխատակիցներից Վրէժ Ներսէսեանի «Տրդատ արքայ հանդիպում ունեցա՞ւ Մեծն Կոստանդիանոս կայսրի հետ» (ԺԹ., 1999, էջ 65-70) անգլերէն հետազօտութիւնը: Ուսումնասիրողներից շատերը կասկածանքով են վերաբերուել հայ միջնադարեան պատմագիր Ազաթանգեղոսի այն յիշատակութեանը, որ հայոց Տրդատ Գ. Մեծ արքան հանդիպում է ունեցել Հռոմի Կոստանդիանոս Ա. կայսրի հետ: Մանրակրկիտ պրպտումների շնորհիւ հեղինակը կարողացել է յստակեցնել այդ խճճուած հարցը եւ հնարաւոր է համարել, որ նման հանդիպում կարող էր տեղի ունենալ 324ի Նոյեմբերի-325ի

սկզբների ընթացքում՝ կոստանդնուպոլսում կամ նիկոմեդիայում: Այդպիսի մի հանդիպման արդիւնքում երկու երկրների միջեւ հաւանաբար կնքուել է ռազմա-քաղաքական դաշինք:

Ընթերցող հասարակայնութիւնը յատկապէս մեծ հետաքրքրութիւն դրսեւորեց Հանդէսում տպագրուած խորհրդահայ նշանաւոր պատմաբաններից մէկի՝ Մօրուս Հասրաթեանի «Պատմական Իրան եւ Հայաստանը» առաւելապէս տեսական յենք ունեցող ուսումնասիրութեան նկատմամբ (է., 1979, էջ 9-33): 1965ին Հասրաթեանը Բէյրութի Հայկազեան կոլէջի հրաւերով գտնուում էր Լիբանանում: Այստեղ նա ծաւալեց գիտական ու մանկավարժական բուռն գործունէութիւն, կարեւոր դեր խաղաց հայագէտ կադրերի պատրաստման գործում: Ջանասէր, Յառաջ, Պատանեկան Խօսնակ, Սփիւռք եւ այլ պարբերականներում տպագրուեցին նրա մի շարք յօդուածները: 1975ին՝ պրոֆ. Վարազդատ Յարութիւնեանի հեղինակակցութեամբ Բէյրութում լոյս տեսաւ Հասրաթեանի Հայաստանի յուշարձանները ծաւալուն գիրքը, իսկ 1979ին՝ վերոնշուած ուսումնասիրութիւնը: Հեղինակն այստեղ պատմաքննական վերլուծութեան է ենթարկել հայ-իրանական կապերն ու յարաբերութիւնները՝ սկսած Աքեմենեան ժամանակաշրջանից մինչեւ ժ.թ. դ. սկզբները: Համեմատութեան մէջ դնելով այլ (մարական, հռոմէական, բիւզանդական, արաբական, սելջուկեան, մոնղոլական, թուրքմէնական, թուրքական) եւ իրանական տիրապետութիւնների թողած հետեւանքները միմեանց հետ, հեղինակը գրում է. «Պատմութեան ընթացքում հայ ժողովրդի համար բոլոր տիրապետութիւնների ոչ միայն ամէնից տանելին, ամէնից շատ ազդեցութիւն թողածը, այլեւ իր նշանակութեամբ, ըստ իս, զարմանալի կերպով նոյնիսկ ընդունելի, որպէս պատմական անհրաժեշտութիւն, դա պարսկա-իրանական տիրապետութիւնն է» (էջ 12): Պատմաբանը անարդար է համարում այն տեսակէտը, թէ իբր Պարսկաստանը եղել է հայ ժողովրդի, հայ երկրի նախ թիւ մէկ, ապա թիւ երկու թշնամին: «Այդ մի անարդար գնահատական է,- գրում է նա,- որից պէտք է ի սպառ հրաժարուել, որովհետեւ այդ է պահանջում առարկայական գիտական պատմագրութիւնը եւ պատմական ճշմարտութիւնը» (էջ 12): Իրականում, ըստ հեղինակի, հայ ժողովրդի մեծագոյն դժբախտութիւնը ռազմիկ քոչուոր ցեղերի (թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, թուրքմէններ, թուրքեր, քրդեր) թափանցումն էր Հայաստան ոչ միայն որպէս նուաճող, այլեւ որպէս հաստատուն բնակիչ ու հետզհետէ նստակեաց գերիշխող տարր: Չնայած իր վիճելի, երբեմն էլ անընդունելի տեսակէտերին, սոյն աշխատութիւնը կարելի է դասել Հանդէսում տպագրուած լաւագոյն յօդուածների շարքին:

Միջնադարում հայ-արաբական յարաբերութիւնների պատմութեան հարցերին են նուիրուած Վեր. Մանուէլ Ճինպաշեանի եւ Սեղա Տատոյեանի անգլերէնով լոյս տեսած յօդուածները: Ճինպաշեանի յօդուածում քննարկման առարկայ է դարձել հայ-արաբական յարաբերութիւնների չափազանց իւրօրինակ դրուագներից մէկը՝ 652ի Դամասկոսի հայ-արաբական խաղաղութեան պայմանագիրը (Զ., 1977-1979, էջ 169-174): Տատոյեանի յօդուածը, որ կրում է «Նիւթեր միջնադարեան հայ-արաբական յարաբերութիւններու պատմութեան համար» խորագիրը (ԺԲ., 1992, էջ 339-355), յատուկ քննութեան է ենթարկել հայ-արաբական յարաբերութիւնները մշակութային, իմացական, օրէնսգիտական, լեզուագիտական, ճարտարապետական եւ արուեստի այլ ճիւղերի բնագաւառներում, մարզեր, որ պատմագիտութեան մէջ անհրաժեշտ ուշադրութեան չեն արժանացել: Հեղինակը ներկայացնում է նաեւ հայագգի արաբական մի շարք մշակութային ու քաղաքական գործիչների, հայ թագուհիների ու արքայամայրերի:

Ժ.-ԺԳ. դդ. հարաւ-արեւելեան Կովկասի, մասնաւորապէս՝ Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանքի ցեղագրական տեղաշարժերին է նուիրուած Տիգրան Գուլումճեանի անգլերէն յօդուածը (Բ., 1971, էջ 99-122): Հեղինակի մասնաւոր ուշադրութեան կենտրոնում են եղել քոչուորական եւ իսլամ ցեղերի՝ առանձնապէս սելջուկ-թուրքերի եւ մոնղոլների տեղաշարժները: Շեշտելի է, որ հեղինակի օգտագործած միջանի տեղանուններ՝ Արեւելեան Անատոլիա, Ատրպէյճան եւ լւ., չեն արտայայտում ժամանակաշրջանի իրողութիւնները եւ յուժ արդիականացուած են:

Բագրատունեաց Հայաստանի նշանաւոր քաղաքական-պետական գործիչներից մէկի՝ Սմբատ Ա. Բագրատունի թագաւորի (890-914) ու նրա արտաքին քաղաքականութեան ուսումնասիրութեանն է նուիրուած Ռաֆայէլ Մաթեոսեանի շահեկան յօդուածը (ԺԸ., 1998, էջ 41-55): ԺԲ.-ԺԳ. դդ. ընթացքում հայ իրականութեան իշխանական նոր տներից մէկի՝ Մահկանաբերդցիների (Սաղունեաններ) պատմութեանն է նուիրուած Հայրապետ Մարգարեանի յօդուածը (նոյն տեղում, էջ 9-40): Հեղինակը վիճարանական է համարում սոյն տոհմի Արժրունիներից սերուելու տարածուած տեսակէտը, մերժում նաեւ վրացական ծագման վարկածը եւ հաւաստի իրողութիւն համարում նրանց հայկական եւ բարձր, ազնուականական ծագումը: Միջնադարեան Հայաստանում լայն տարածում ստացած թոնդրակեան աղանդաւորական շարժման պատմութեանն է նուիրուած Վարդգէս Համազասպեանի «Թոնդրակեցիների շարժումը Թ.-ԺԱ. դարերում» յօդուածը (Դ., 1973, էջ 9-28), որն, ըստ էութեան, հեղինակի դեռեւս 1949ին հրատարակած աշխատութեան վերաշարադրանքն է (տե՛ս՝

Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1949, No. 3): Սա միակ դէպքն է, որ Հանդէսում վերատպագրուում է նախկինում լոյս տեսած որեւէ աշխատութիւն:

Յայտնի է, որ Կիլիկիայի հայկական պետութիւնը կարեւոր տեղ է գրաւել ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ համաշխարհային պատմութեան մէջ: Ընկած լինելով Միջերկրական ծովի հիւսիս-արեւելեան ափին՝ Ասիայի, Եւրոպայի եւ Աֆրիկայի միջնակէտում, Կիլիկիայի հայկական պետութիւնը նշանակալից եւ գործուն դեր է խաղացել ժԱ-ժԴ. դդ. Մերձաւոր Արեւելքի եւ հարաւ-արեւմտեան Եւրոպայի երկրների քաղաքական, մշակութային, տնտեսական կեանքում: Սրանով պէտք է բացատրել այն մեծ հետաքրքրութիւնը, որ ցուցաբերել է Հանդէսը այս հայաշխարհի պատմութեան նկատմամբ: Այդ հետաքրքրութիւնը մասնաւորապէս բացատրուում է նաեւ Հանդէսի այն ժամանակուայ խմբագիր Երուանդ Քասունու գիտական հետազոտութիւնների ոլորտով, որ վերաբերում էր Կիլիկեան Հայաստանի պատմութեան նախահայկական եւ իշխանապետական (1070-1137) շրջաններին: Նրա յօդուածներից երկուսը նուիրուած են մինչեւ Ռուբինեանները (1080) Կիլիկիայում հայերի քաղաքական ներկայութեանը՝ «ժԱ. դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պետտ-Սաչատուր եւ Վասակ Պահլաունի» (Բ., 1971, էջ 123-134) եւ «Տարսոնի իշխանը Ապղարիպ Հասան Արծրունի. (1071-1080 թթ.)» (Գ., 1972, էջ 91-100): Այս յօդուածները հիմք ծառայեցին հեղինակի Հայերը Կիլիկիոյ մէջ մինչեւ Ռուբինեան իշխանապետութեան հիմնադրումը մենագրութեան (Բէյրութ, 1974) համար: Շարունակելով հետազոտութիւնները նախասիրած այս բնագաւառում՝ Քասունին հրատարակում է երկու յօդուած նուիրուած այդ ժամանակաշրջանի հայ-խաչակրաց յարաբերութիւններին՝ «Սաչակիրներ Անտիոքի դիմաց» (Ա., 1970, էջ 61-73) ու «Սաչակիրներու առաջին արշաւանքները Կիլիկիոյ մէջ եւ Եդեսիոյ լատին կոմսութեան հիմնադրութիւնը» (Դ., 1973, էջ 24-47): Ի մի բերելով կատարուած ուսումնասիրութիւնները՝ հեղինակը դրանք ամփոփեց Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի քաղաքական հոյովոյթին մէջ (1080-1137) մենագրութիւնում (Բէյրութ, 1974), որը Կիլիկիայի հայոց պատմութեանը նուիրուած լաւագոյն ուսումնասիրութիւններից մէկն է: Նշուած բնագաւառին վերաբերող հեղինակի վերջին ընդարձակ յօդուածով՝ «Ռուբէն Գ. (1175-1187) եւ իր կտակը» (Ժ., 1982-1984, էջ 111-162) աւարտուում է մինչ-թագաւորական շրջանի Կիլիկիայի հայոց իշխանապետութեան պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւնների այս շարքը: Ակնկալում էր, որ հեղինակը ձեռնամուխ էր լինելու նաեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան

չըջանի պատմութեան ուսումնասիրութեանը, սակայն, ցաւօք, նա ալեւս դադարեցրեց աշխատակցութիւնը Հանդէսին:

Կիլիկիայի Հայկական թագաւորութեան նշանաւոր դէմքերից մէկի՝ Զապէլ Ռուբինեանին է նուիրուած Ազապի Նասիպեանի «Կիլիկիոյ Զապէլ թագուհին եւ իր ժամանակը» անգլերէն ուղագրաւ յօդուածը (ԺԴ., 1994, էջ 41-51): Այս ուսումնասիրութեան շնորհիւ մեր առջեւ յառնում են Հայ քաղաքական ծիրի եզակի կին գործիչներից մէկի՝ Զապէլ Ռուբինեանի (1215-1252) մշակութային, հասարակական ու պետական գործունէութեան քիչ յայտնի մանրամասները: Հեթումեանների ժամանակաշրջանի Հայ-լատինական եկեղեցական յարաբերութիւնների եւ Սսի 1307ի ժողովին է նուիրուած Գաբրիկ Յարութիւնեանի «Քրիստոնէական եկեղեցիների համընդհանրութեան գաղափարը Սսի 1307ի ժողովում» յօդուածը (նոյն տեղում, էջ 147-167):

Կիլիկիայի Հայկական պետականութեան կործանումից յետոյ (1375) Հայ ազատագրական միտքը ելք էր փնտռում դուրս գալու ստեղծուած ծանր վիճակից եւ վերականգնելու քաղաքական անկախութիւնը: Այդ ճիգերից քիչ յայտնի դրուագներից մէկին է նուիրուած Աղաւնի Ութուջեանի «Հայկական պետականութեան վերականգնման փորձ ԺԵ. դարի կէսերին» յօդուածը (ԺԺ., 1999, էջ 107-122): Հայկական յիշատակարաններից քաղուած վկայութիւնների վերլուծութեան միջոցով հեղինակը ներկայացնում է 1465ի Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում Սմբատ Արծրունի-Սեֆեդիներին Հայոց թագաւոր օծելու հանգամանքները, այդ արարքի հիմնական դերակատարներին, արժէքաւորում երեւոյթը:

Բազրատ Ուլուբաբեանի յօդուածը վերաբերում է Հայոց նուիրապետական աթոռներից մէկի՝ Աղուանից կաթողիկոսութեան ստեղծման պարագաներին (Է., 1979, էջ 35-36): Հեղինակը նշում է, որ Աղուանից կաթողիկոսական աթոռը հիմնադրուել է Զ. դ. երկրորդ կէսին, սակայն ենթարկուել է Ամենայն Հայոց կաթողիկոսութեանը, որի գահակալներն էին ձեռնադրում Աղուանքի հայրապետերին: Վրէժ Ներսէսեանը՝ հաւատարիմ՝ ընթերցողին հաճելի անակնկալ պարզեւելու իր սովորութեանը, խիստ ուղագրաւ անգլերէն յօդուած է տպագրել Հանդէսի 1992ի համարում՝ «Պերնարտ Ֆոն Պրէյտենպախի «Ուխտագնացութիւն ի Սուրբ Երկիրի» եւ անոր նշանակութիւնը Հայկական տպագրութեան պատմութեան համար» (ԺԲ., 1992, էջ 41-59): Սոյն ուսումնասիրութիւնը բաղկացած է երեք մասերից: Առաջինում տրուում է Ֆոն Պրէյտենպախի դէպի Երուսաղէմ ուխտագնացութեան պատմութիւնը, որը նա ձեռնարկել էր 1483-1484ին: Երկրորդ մասում հեղինակն անդրադառնում է բաւարացի Եոհան Շիլթպերկէրի Գերեզարութիւն եւ ճամբորդութիւնների գրքին, որի 13րդ եւ

82-86րդ գյուղներում խօսուում է հայերի եւ հայոց լեզուի մասին: Երրորդ մասում ներսէսեանն ընթերցողին է ներկայացնում հայութեան եւ հայոց լեզուին անդրադարձող եւրոպական 12 հնատիպ գրքերի մի ցուցակ, որոնք բացակայում էին նախընթաց ցանկերում:

Հայոց միջնադարի պատմութեանը վերաբերող Հանդէսում տպագրուած վերջին յօդուածները պատկանում են Լեւոն Վարդանի գրչին: Դրանցից մէկը կրում է «Օսմանեան քանի մը հարկեր ըստ կանոնագրութիւններու» (Է., 1979, էջ 57-83) խորագիրը: Ի դէպ, այս յօդուածը մաս է կազմում նորոգ հանգուցեալ գրագէտի Հարկերը Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններու մէջ. ԺԵ.-Ի. դարեր հինգ-հատորանոց բառարանին, որի միայն առաջին եւ երկրորդ հատորներն են պատրաստ տպագրութեան (Ա-Խ տառերը): Սոյն ուսումնասիրութեան հետ սերտ աղերս ունեն նաեւ հեղինակի երկու այլ հետազօտութիւններ եւս: Դրանցից մէկը կրում է «Օսմանեան հարկային կանոնագրութիւնները եւ արեւմտահայութիւնը» խորագիրը (Զ., 1977-1978, էջ 105-158): Սա պատմա-աղբիւրագիտական բնոյթի ուսումնասիրութիւն է, որտեղ աշխատասիրողը ընդարձակ եւ հմտալից ծանօթագրութիւններով ներկայացնում է ԺԶ.-ԺԷ. դդ. օսմանեան մի շարք կանոնագրութիւնների թարգմանութիւնները, որոնք աղբրւում են Արեւմտեան Հայաստանի, եւ մանաւանդ արեւմտահայութեան, տնտեսական առօրեային: Ներկայացուող վաւերագրերը հերքում են թուրք պատմագրութեան մէջ արտայայտուած այն պնդումը թէ իբր հայերը եւ միւս նուաճուած ժողովուրդները երջանիկ եւ բաղկացուցիչ տարրերն էին Օսմանեան բարեխնամ կայսրութեան, եւ ցոյց տալիս այն դժնդակ կացութիւնը, որի մէջ ապրում էին հպատակ ժողովուրդները: Միւսը (Ա., 1970, էջ 9-45), որն ի դէպ, Հանդէսի հիմնադիր թուի առաջին յօդուածն է, մեզ է ներկայացնում Օսմանեան կայսրութեան ամբողջ պատմութեան ընթացքում (մինչեւ 1918) խտրական այն քաղաքականութիւնը, որ վարուել է ընդհանրապէս ոչ-թուրք ժողովուրդների եւ մասնաւորապէս հայերի նկատմամբ:

Հայ ժողովրդի նոր եւ նորագոյն պատմութեան հարցերը Հանդէսի էջերում աւելի լայնօրէն ու բազմակողմանիօրէն են ներկայացուած: Ինչպէս եւ սպասելի էր, այստեղ առանձնակի ուշադրութեան են արժանացել հայ ժողովրդի նոր եւ նորագոյն պատմութեան երկու կարեւորագոյն հիմնահարցերը՝ Հայկական հարցն ու Հայկական Մեծ Եղեռնը: Որպէս կանոն, այս բնագաւառների բոլոր յօդուածները գրուած են արխիւային քիչ յայտնի կամ նոր շրջանառութեան մէջ դրուած վաւերագրերի հիման վրայ եւ մեծ նշանակութիւն ունեն հարցի գիտական ու պատմական յետազայ մշակման գործում: Այստեղ Հան-

դէսի նախասիրած հեղինակներից են Չաւէն Մարրիեանը, Լեւոն Վարդանը եւ Արթիւր Պէյլերեանը: Նրանցից առաջինը Հանդէսում տպագրել է տաներկու, իսկ երկրորդն ու երրորդը՝ չորսական համապատասխան յօդուածներ: Յօդուածներով հանդէս են եկել նաեւ հայ եւ օտար ճանաչուած այնպիսի պատմաբաններ, ինչպիսիք են ակադեմիկոս Հրանտ Աւետիսեանը, Սայէհ Չահրետտինը, Վահագն Տատրեանը, Քրիսթոֆր Ուոքերը եւ ուրիշներ: Առանց տատանուելու կարելի է շեշտել, որ իր հրապարակումներով եւ տպագրած ուսումնասիրութիւններով Հանդէսն անուրանալի հեղինակութիւն է ձեռք բերել Հայոց հարցի եւ ցեղասպանութեան հետազոտութեան բնագաւառում, դարձել տուեալ խնդիրների հեղինակաւոր ու ծանրակշիռ խօսնակներից մէկն արդի հայագիտութեան մէջ:

ԺԹ. դ. երկրորդ կէսին Օսմանեան կայսրութիւնում հայութեան ընկերային ու տնտեսական ծանր վիճակի, հայկական առաջին ջարդերի, համիդեան զուլումի քաղաքականութեան լուսարանութեանն են նուիրուած Պէյլերեանի «Արեւմտեան Հայաստանի ընկերային եւ տնտեսական վիճակը տասնիններորդ դարու կէսուն» (ԺԳ., 1993, էջ 199-215) եւ «Համիտիէ զօրախումբերու կազմակերպութեան ծագումը (1890-1894)» (ԺԴ., 1994, էջ 81-98) յօդուածները: Առաջին յօդուածն ունի պատմա-աղբիւրագիտական բնոյթ եւ ներկայացնում է էրզրումում Ֆրանսիայի փոխ-հիւպատոսարանի պատասխանատու Լորան Լէոպոլդէ ինոյի գեկուցագիրը, որ նա յղել էր իր կառավարութեանը 1868ի կէսերին: Այս վաւերաթուղթը գալիս է ապացուցելու թէ որքան ծանր է եղել արեւմտահայութեան տնտեսական, ընկերային եւ կրօնական կացութիւնը ԺԹ. դ. կէսերին, հանգամանք, որ ամէն կերպ եւ գնով փորձում են սքօղել թուրք հին ու նոր պատմաբանները: Երկրորդ յօդուածում խօսւում է մեր պատմագիտութեան մէջ քիչ ուշադրութեան արժանացած այնպիսի մի կարեւոր կազմակերպութեան մասին, ինչպիսին են համիտիէ զօրամիւտորումները: Հեղինակն այստեղ ներկայացնում է այդ զօրախմբերի ստեղծման պարագաները, նպատակները, գնահատում խաղացած դերն ու նշանակութիւնը դարի վերջերի հայկական ջարդերի կազմակերպման գործում: Նոյն հեղինակն ընդարձակ գրախօսական է տպագրել նուիրուած Հայկական հարցի ոլորտում Պօղոս Նուպար փաշայի անխոնջ գործունէութիւնը գնահատող եւ վեր հանող Վաչէ Ղազարեանի մենագրութեանը (ԺԼ., 1998, էջ 394-401):

1915ի Մայիսի 22ին Երրեակ համաձայնութեան երկրները յատուկ յայտարարութիւն յղեցին Օսմանեան կայսրութեան կառավարողներին, որ պատերազմի ավարտից յետոյ, նրանք պէտք է անձնապէս պատասխանատու նկատուեն հայերի հանդէպ կիրառուած կոտորածների

համար: Ահա այս յայտարարութեան եւ դրան նախորդող դաշնակից երկրների ղեկավարներին ուղղուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ի հեռագիրի քննութեանն է նուիրուած Մարրիբանի «Գէորգ հինգերորդ կաթողիկոսի հեռագիրը եւ դաշնակիցներու 1915ի մալիսեան միացեալ յայտարարութիւնը» յօդուածը (ԺԷ., 1997, էջ 117-125): 1997ին Երեւանում լոյս տեսաւ Աւետիսեանի Հայկական հարցը 1918 թուականին շահեկան մենագրութիւնը: Այս աշխատութեան երրորդ գլխի՝ Տրապիզոնի բանակցութիւնների վերաբերեալ հատուածը, նա նախապէս հրատարակել է Հանդէսում՝ «Հայկական հարցը Տրապիզոնի կոնֆերանսի ժամանակաշրջանում (Փետրուար 10/23-Ապրիլ 9/22 1918)» (ԺԵ., 1995, էջ 183-234) խորագրի ներքոյ: Այստեղ հեղինակը ներկայացրել է Բրեստ-Լիտովսկից յետոյ ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած քաղաքական կեանքի նոր դրսեւորումները, Տրապիզոնի բանակցութիւնների առաջին փուլը, դրանց ընդհատումը, բացայայտում է թուրքական զաւթողական նկրտումները, Հայկական հարցի աննպաստ ընթացքի պատճառները:

Արտաշէս Տէր Խաչատուրեանն իր յօդուածում՝ «Հայկական երկու պատուիրակութիւնները (1918-1919)» (Ա., 1970, էջ 46-60) վերլուծել է Ազգային եւ Հայաստանի հանրապետութեան պատուիրակութիւնների գործունէութիւնը Սեւրին նախորդած ժամանակաշրջանում: Պէյլերեանն անդրադառնում է 1921ի Լոնդոնի եւ Մոսկուայի խորհրդաժողովներում Հայկական հարցի հոլովոյթին (Ե., 1974, էջ 9-37): Երկու յօդուածներն էլ հարուստ են փաստական նիւթով եւ աչքի են ընկնում վերլուծութիւնների ինքնատիպութեամբ, տեսակէտերի թարմութեամբ:

Հանդէսն առաջիններից մէկն էր, որ անդրադարձաւ արդի թուրք պատմաբան Թանէր Աքչամի Թուրք ազգային ինքնութիւնը եւ Հայկական հարցը գրքին (Ստամբուլ, 1992)՝ թարգմանաբար տպագրելով մի ամբողջ հատուած (ԺԵ., 1995, էջ 87-107): Ի դէպ, Հանդէսի նոյն համարում տպագրուել է նաեւ Արա Սանճեանի գրախօսականը՝ սոյն գրքի եւ ընդհանրապէս թուրքական պատմագրութեան վերատեսական հոսանքին վերաբերեալ (էջ 375-400):

Հանդէսում առաւել քննարկուած նիւթերից է Հայկական ցեղասպանութեան հարցը: Հանդէսի համարեա բոլոր համարներում յղուածներ կան այդ խնդրի վերաբերեալ, իսկ 1995ի համարն ամբողջութեամբ (602 էջ) նուիրուած է ցեղասպանութեանը կամ նրան աղերսուող թեմաներին: Այս բնագաւառում յատկապէս նկատելի է Լեւոն Վարդանի ներկայութիւնը, որ տասնվեց յօդուածներ է տպագրել տրեւել նիւթի շուրջ: Լեւոն Վարդանն առաջինն է, որ տուեց Հայկական Մեծ եղեռնի յստակ ժամանակագրութիւնը: Նա յատուկ յօդուած է

տպագրել այդ խնդրի վերաբերեալ՝ «ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի» (Գ., 1972, էջ 259-282), որը մէկ հատուածն է Հեղինակի աւելի ուշ լոյս ընծայած նոյնանուն ընդարձակ ուսումնասիրութեան (Բէյրութ, 1975): Այս յօդուածում Լեւոն Վարդանը ներկայացնում է միայն 1915ի Յուլիանոսի շրջ մինչեւ նոյն թուականի Ապրիլ 30ը ընկած դէպքերի ժամանակագրութիւնը, երբ գործադրուեց երիտթուրքերի կողմից վաղօրօք ծրագրուած հայերի ցեղասպանութեան առաջին փուլը: Միւս յօդուածում՝ «Հայկական Տասնհինգը եւ թուրք գերմանական դաշնագիրը» (Բ., 1971, էջ 45-80) Հեղինակը առանձին քննութեան նիւթ է դարձրել 1914ի Օգոստոս 2ի թուրք-գերմանական դաշնագիրը, որը նրա կարծիքով կարեւորագոյն բարոյական եւ քաղաքական նշանակութիւն է ունեցել թուրքերի համար Հայկական Տասնհինգի իրագործման ժամանակ: Հեղինակը ներկայացնում է նաեւ դաշնագրի հայերէն թարգմանութիւնը ու կատարում դրա բոլոր 8 յօդուածների հմտալից քննութիւնը: Միւս յօդուածում Լեւոն Վարդանը անդրադառնում է Հայկական ցեղասպանութեան պատասխանատուների խնդրին (Դ., 1973, էջ 67-80): Հեղինակն իրաւացիօրէն նշում է, որ ո՛չ առանձին երիտթուրք անհատները, եւ ո՛չ մասնաւոր որեւէ կազմակերպութիւն կամ կուսակցութիւն ի վիճակի չէին գործադրելու Հայկական Տասնհինգը: Դա հնարաւոր եղաւ միայն շնորհիւ թուրքական պետական իշխանութիւնների, բանակի, թուրք եւ քուրդ ժողովուրդների միասնական ջանքերի, որոնց խրախուսում էին Գերմանիան եւ Աւստրիա-Հունգարիան: Սրանք բոլորն էլ, առանց բացառութեան, պատասխանատուներն են Հայկական Մեծ եղեռնին: «Հայկական Տասնհինգը թուրքական մատենագիտութեան մէջ» յօդուածը (ԺԵ., 1995, էջ 301-374) Լեւոն Վարդանի լաւագոյն ուսումնասիրութիւններից մէկի՝ Հայկական Տասնհինգը թուրք մատենագիտութեան եւ մամուլի մէջ եւ մենք (Բէյրութ, 1998) գրքի առանձին մէկ հատուածն է: Այս ուսումնասիրութիւնը ու նախընթաց յօդուածը եզակի են հայ պատմագիտութեան մէջ: Հայ ընթերցողն ու գիտական հասարակայնութիւնն այժմ հնարաւորութիւն ունեն ծանօթանալու այն աշխատանքներին, որ կատարուել եւ կատարուում են թուրքական պատմագրութեան մէջ՝ Հայկական ցեղասպանութեան հիմնահարցերի իւրօրինակ «ուսումնասիրութեան» ուղղութեամբ:

Հայկական ցեղասպանութեան առանձին մէկ դրուագին են նուիրւած Արա Սարաֆեանի «Մարտինի ջարդերը» (ԺԸ., 1998, էջ 261-292) անգլերէն վաւերագրական ուսումնասիրութիւնը եւ Պէյրեանի «Դոմինիկեան միսիոնարի մը անտիպ մէկ վկայութիւնը Մարտինի 1915ի կոտորածներուն մասին» յօդուածը (ԺԷ., 1997, էջ 81-106): Դոմինիկեան միաբանութեան Մոսուլի կենտրոնի մեծաւոր հայր Պերրէն թուր-

քական իշխանութիւնների կողմից 1915ի Ապրիլ ամսից մինչև 1916ի վերջերն արգելափակուած է եղել Մարտինում: Այդպիսի արտակարգ պարագաների բերումով է, որ նա դարձաւ Ի. դ. առաջին ցեղասպանութեան վկան: Հայր Պերդէն մանրամասն գեկուցագիր է կազմել այն անցուղարձերի վերաբերեալ, որոնց ականատեսն էր նա դարձել ակամայ: Նրա վկայութիւնները հաստատում եւ ամբողջականացնում են ցեղասպանութեան մասին նախապէս լոյս տեսած գերմանական, ամերիկեան, ֆրանսիական, անգլիական ու ռուսական պաշտօնական փաստաթղթերի ժողովածուներում գտնուող տեղեկութիւնները:

Հայկական ցեղասպանութեան պատմութեան լուսագոյն ուսումնասիրողներից մէկի՝ անգլիացի պատմաբան Բրիսթոֆըր Ուոքըրի անգլերէն յօդուածում՝ «Բրիտանիա եւ Հայկական ցեղասպանութիւնը. մտորումներ 1995ին» (ԺԷ., 1997, էջ 107-116) ներկայացուած է պաշտօնական Լոնդոնի որդեգրած քաղաքականութիւնը Հայկական հարցի նկատմամբ, որը, հեղինակի կարծիքով, միշտ էլ մնաց ոչ թէ քաղաքականութեան խնդիր, այլ մանաւանդ՝ քարոզչութեան: Հակառակ պաշտօնական Լոնդոնի, գտնուեցին լորդ Բրայսի ու Արնոլդ Թոյնրիի նման ազատականներ, որոնք կարողացան թիկունք կանգնել հայութեան ու Հայկական հարցին: Նոյն հեղինակի գրչին է պատկանում «Հայկական ցեղասպանութեան շուրջ գրելու մասին» անգլերէն տեսական յօդուածը (ԺԵ., 1995, էջ 483-496): Սա վերին աստիճանի մի ուշադրաւ աշխատանք է, որտեղ հեղինակը խորհուրդ է տալիս ուսուսումնասիրողներին՝ մեծաւ զգուշութեամբ մօտենալ փաստաթղթերի, եւ յատկապէս թուրքական փաստաթղթերի, հաղորդած տուեալներին: Թուրքական պետական շրջանակների հրահանգներով տասնամեակներ շարունակ ոչնչացուել են թուրքական արխիւային այն փաստաթղթերը, որոնք անմիջականօրէն վերաբերում էին Հայկական ցեղասպանութեանը: Չնայած այդ հանգամանքին, այսօր էլ շրջանառութեան մէջ կան ոչ-քիչ թուով թուրքական վաւերագրեր, որոնք պէտք է ընթերցել տողընդմէջ, ուր միշտ թաքնուած են մնում որոշ ճշմարտութիւններ: Նոյնքան կարեւոր են նաեւ ամերիկեան, ֆրանսիական, անգլիական, գերմանական, աւստրիական, չեզոք պետութիւնների եւ կրօնական կազմակերպութիւնների արխիւային նիւթերը: Առանձնապատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել նաեւ հայկական սկզբնաղբիւրների նկատմամբ:

«Հայկական ցեղասպանութիւնը պատմական դիտանկիւնէն. ընկերաբանական վերլուծութիւն մը» (նոյն տեղում, էջ 109-120) անգլերէն յօդուածում, որի հեղինակն է Պերճ Պերպէրօղլուն քննութեան է ենթարկուած Օսմանեան կայսրութեան ընկերային, տնտեսական, կրօնական եւ մշակութային կացութիւնը ցեղասպանութեան նախօրեա-

կին: Ուսումնասիրութեան միջոցով հեղինակը եկել է այն եզրակացութեան, որ երիտթուրքերը՝ զարգացնելով համիտեան ցեղապաշտական ծրագիրը փորձում էին ստեղծել ցեղայնօրէն եւ կրօնական տեսանկիւնից զուտ թուրքական կայսրութիւն եւ այս ծրագրի իրականացման համար է, որ նրանք կազմակերպել են հայերի ցեղասպանութիւնը: Յեղասպանութեան միջոցով,՝ եզրակացնում է հեղինակը,՝ երիտթուրքերը ջանում էին փրկել զէպի անկում ընթացող Օսմանեան կայսրութիւնը, թէ՛ ռազմական տեսակէտից, եւ թէ՛ տնտեսապէս: Հանդէսի նոյն համարում է տպագրուել նաեւ Վահագն Տատրեանի «Կուսակցութեան եւ պետութեան դերերուն նոյնացնումը հայկական ցեղասպանութեան մէջ» անգլերէն յօդուածը (էջ 49-56): Այստեղ հեղինակը՝ վերլուծութեան ենթարկելով երիտթուրքական կուսակցութեան ծրագրային փաստաթղթերն եւ Հայկական ցեղասպանութեան վերաբերեալ շրջանառութեան մէջ գտնուող յայտնի վաւերագրերը, գալիս է այն եզրակացութեան, որ 1915-1916ին իթթիհատական կուսակցութիւնը նոյնանում էր Օսմանեան կայսրութեան պետական մարմինների հետ, որոնք միասնաբար, որպէս մի ամբողջութիւն, կարողացան իրականացնել հայերի ցեղասպանութիւնը: Հայերի ցեղասպանութիւնը որքան կուսակցական մի ծրագիր էր, այնքան էլ պետական քաղաքականութիւն:

Ժամանակակից արար պատմաբան Սալէհ Չահրետտինի (Վիրանան) յօդուածը՝ «Հայերի բնաջնջումը 1915ին. պատճառներ ու հետեւանքներ» (նոյն տեղում, էջ 121-134), իրենից մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Հեղինակը յայտնի է Հայկական հարցին նուիրուած իր ռազմաթիւ մեծարժէք ուսումնասիրութիւններով: Հանդէսում տպագրուած սոյն յօդուածում հեղինակն՝ օգտագործելով հայկական, արաբական եւ արեւմտաեւրոպական սկզբնաղբիւրներ, Հայկական եղեռնը դնելով «ճշդի» եւ «ստի» համադրութեան մէջ, գալիս է այն համոզման, որ 1915-1916ի Հայկական ցեղասպանութիւնը եղել է երիտթուրքերի պետական քաղաքականութեան դրսեւորումներից մէկը: Չահրետտինը ոչ միայն վերլուծում է հայկական կոտորածների պատճառները, այլեւ ներկայացնում է դրանց արդիւնքները: Նա գտնում է, որ արդի թուրքական պետութիւնը պէտք է քաջութիւն ունենայ եւ քաղաքացիութիւն դրսեւորի՝ ճանաչելու հայերի ցեղասպանութեան փաստը: Այսօր թուրքերը պէտք է թոյլ տան, որպէսզի հայերը վերադառնան իրենց պատմական հայրենիքը, վերջ տան Արեւմտեան Հայաստանի ռազմակալմանը, այն պէտք է վերադարձնեն իր օրինական տիրոջը՝ հայ ժողովրդին, պէտք է փոխհատուցեն ընդազաղթի եւ կոտորածների ժամանակ հայերին պատճառուած ահռելի վնասները:

Հայկական ցեղասպանութեան նկատմամբ Վատիկանի որդեգրած քաղաքականութեան բացայայտմանն է նուիրուած Մարրլեանի «Բենեդիկտոս ԺԵ. պապը եւ Մեծ եղեռնը» յօդուածը (ԺԹ., 1999, էջ 141-154): Այստեղ ընթերցողներին են ներկայացուած Հայկական ցեղասպանութեան քիչ յայտնի այնպիսի ծալքեր, ինչպիսիք են Վատիկանի եւ անձամբ Հռոմի պապի ջանքերն ազդելու երիտթուրքական կառավարողների վրայ՝ դադարեցնելու Հայկական կոտորածները: Վատիկանի հրահանգով պապական նուիրակ Անճելո Տոլլին 1915ին Պոլսում ուղղակի բանակցութիւններ է սկսել գերմանական եւ աստրո-հունգարական դեսպանատների հետ, որպէսզի վերջիններս՝ օգտագործելով իրենց հեղինակութիւնն ու ազդեցութիւնը, փորձէին վերջ տալ հայոց «բարբարոս հալածանքը» (էջ 141): Սակայն, ինչպէս դեսպանատները, այնպէս էլ երիտթուրք կառավարողները չընդառաջեցին կաթոլիկ եկեղեցու այդ խնդրանքին: Յօդուածում բերուած են նաեւ Բենեդիկտոս ԺԵ. պապի սուլթան Մոհամմէդ Ե-ին ուղղուած նամակների թարգմանութիւնները, որոնցից յատկապէս հետաքրքրական է 1915ի Սեպտեմբերի 10ի նամակը: Այստեղ պապը յոյս է յայտնում, որ եթէ սուլթանն իմանայ իրողութիւնը, ապա անմիջապէս վերջ կը տայ խրժղութիւններին, քանզի հայերի կոտորածները կատարուած են նրա «կամքին հակառակ» (էջ 143): Յօդուածի վերջում հեղինակն իրաւացիօրէն շեշտում է, թէ «միջազգային քաղաքական իրադրութեան մէջ, որքան ալ մեծ ըլլար Վատիկանի Աթոռին բարոյական հեղինակութիւնը, ան քաղաքականօրէն սահմանափակուած էր» (էջ 151): Ահա թէ ինչու յանուն հայերի պապի կատարած դիմումները մնացին անհետեւանք:

Գերմանացի նշանաւոր մարդասէր, հայ ժողովրդի մեծ բարեկամ Արմին Վեկնէրի հայասիրական գործունէութեան բնութագրմանն է նուիրուած Ինկրիտ Սըմանի «Արմին Թէոֆիլ Վեկնէրը՝ հայասէր (1886-1978)» անգլերէն յօդուածը (ԺԵ., 1995, էջ 433-482): Չափազանց հետաքրքրական է այն իրողութիւնը, որ Վեկնէրն իր գրական ստեղծագործութիւններում քանիցս անդրադարձել է Հայկական թեմատիկային, մասնաւորապէս Եղեռնի զոհերի ոգեկոչմանը: Կեանքի վերջին տարիներին նա ձեռնամուխ էր եղել ցեղասպանութեանը նուիրուած մի դիւցազներգութեան եւ վէպի ստեղծման աշխատանքներին, վէպ, որը պէտք է ունենար ճիշդ Ֆրանց Վերֆէյի Մոլսա յերան քառասուն օրը նշանաւոր ստեղծագործութեան կարեւորութիւնը: Յաւոք, այս աշխատանքները մնացին անաւարտ:

Հանդէսի վաստակաւոր աշխատակից եւ ներկայիս պատասխանատու խմբագիր Հայր Անդրանիկ վրդ. Կռանեանի «Բառերուն միւս երեսը» յօդուածը (նոյն տեղում, էջ 13-48) հեղինակի ընդարձակ յօդ-

լածաշարի երրորդ մասն է, որն ի տարբերութիւն իր նախորդների, ունի ոչ թէ բանասիրական բնոյթ, այլ նախեւառաջ քաղաքական իմաստ ու բովանդակութիւն: Հեղինակը սկզբում իր մտորումներն է կիսում ընթերցողի հետ («Եղեունի 80ամեակ եւ մահուան խորհուրդ»): Այս վերլուծում է 39 այն բառերը (կոտորել-կոտորած, ջարդել-ջարդ, մորթել, բնաջնջել, եղեւն, նախճիր, կողոպուտ, աքսոր եւլն.), որոնք խորհրդանշում են Հայկական ցեղասպանութիւնը: Այս յօդուածը, փաստօրէն, Հայոց Մեծ եղեւնի քաղաքական բառարանն է: Բառեր, որ նախապէս լրիւ այլ իմաստ էին արտայայտում, այժմ՝ թուրքերի ջանքերով, իմաստափոխուեցին, ձեռք բերեցին նոր երանգ, կամ ինչպէս հեղինակն է գրում՝ «բառերուն թիրախները շեղեցան իրենց նպատակէն եւ երան Մարդուն դէմ» (էջ 47):

Երկրորդ աշխարհամարտի տարիներին եւ յետպատերազմեան շրջանում Հայկական հարցի դրսեւորման երեւոյթները բաւարար ուշադրութեան չեն արժանացել ուսումնասիրողների կողմից: Թերեւս բացառութիւն են կազմում Հանդէսի մշտական եւ արդիւնաւէտ աշխատակից Մարրիբանի հետազօտութիւնները: Այս խնդրին են նուիրւած նրա շուրջ մէկ տասնեակ մեծարժէք յօդուածներ, որոնք, ըստ էութեան, նորոյթ են հայ պատմագիտութեան համար եւ իրենցով լցնում են այն բացը, որ խիստ նկատելի է սոյն մարզում: «Նացի Գերմանիոյ եւ Փան-թուրանականներու ծրագիրները կովկասի մէջ. 1941» յօդուածում (Թ., 1981, էջ 97-120) հեղինակը ներկայացնում եւ վերլուծում է Խորհրդային Միութեան գրաւեալ տարածքի ապագայի վերաբերեալ նացի տեսարան Ալֆրէտ Ռոզենպերկի ծրագրի մանրամասները: Այդ ծրագրի համաձայն, Խորհրդային Միութիւնը բաժանուելու էր հինգ ռայխկոմիսարիատների, որոնք իրենց հերթին պէտք է բաժանուէին գլխաւոր կոմիսարիատների: Հայաստանը մտնելու էր «կովկաս» առանձին ռայխկոմիսարիատի մէջ եւ գլխաւորուելու էր գերման պաշտօնէութեան միջոցով: Օգտագործուելու էին նաեւ հայկական գերմանամէտ այն ուժերը, որ ցանկութիւն կ'ունենային աշխատակցել նացի ռեժիմի հետ: Միւս կողմից, Անդրկովկասի նկատմամբ իրենց ծրագրերն էին մշակել նաեւ պանթուրանականները, որոնք երազում էին երկրամասի գրաւման մասին: Հայ քաղաքական գործիչները, որ աշխատակցում էին նացիստների հետ, վճռականօրէն դէմ էին արտայայտուում Հայաստանում թուրքերի ներկայութեանը եւ նախընտրում էին Հայաստանի գրաւումը Վերմախտի կողմից: Մեծ հետաքրքրութեամբ է ընթերցւում նոյն հեղինակի միւս յօդուածը՝ «Համաշխարհային Բ. պատերազմին Հայկական բարձրաւանդակը գրաւելու չգործադրուած ծրագիրը» (Դ., 1973, էջ 46-65): Խօսքը վերաբերում է Միջին Արեւելքում անգլիական ռազմական հրամանատար

րութեան շրջանակներում մշակուած այն ծրագրին, որի համաձայն, եթէ թուրքերը գերմանացիներին ճանապարհ տային դէպի Կովկաս, ապա բրիտանական ռազմական ուժերը պէտք է յարձակոււմ կատարէին Հայկական բարձրաւանդակի վրայ եւ գրաւէին այն: Նախատեսուած էր գրաւել Կարսի, Բայազետի, Էրզրումի եւ Տրապիզոնի շրջանները եւ փակել դէպի Բաքու տանող բոլոր ուղիները: Ինչպէս յայտնի է, Համաշխարհային երկրորդ պատերազմի հենց սկզբներին՝ 1941ի Դեկտեմբերին, Հիտլերի մերձաւորագոյն զինակիցներ Քէյթէլի, Գեբելսի եւ Ռոզենպերկի առաջարկով ստեղծուեցին մի շարք ազգային լեգէոններ, այդ թւում Հայկական լեգէոնը: Մարտիանը յատուկ յօդուած է նուիրել այդ խնդրին՝ (Ժ., 1982-1984, էջ 163-191): Ուսումնասիրութիւնը բաղկացած է հետեւեալ մասերից՝ 1. Հայկական լեգէոնի պատմութիւնը, 2. Բեռլինի «Հայոց ազգային խորհուրդ»ը եւ հայ ռազմագերիները, 3. Հայ ռազմագերիների դիմադրական շարժումները: Այստեղ խիստ եզակի տուեալներ են բերուած Հայկական լեգէոնի ստեղծման եւ ծառայութեան, մասնաւորապէս՝ Դրօ Կանայեանի, Գարեգին Նժդեհի, Վրդէն Շանթի, Ալֆրէդ Մուրադեանի եւ այլոց լեգէոնական գործունէութեան վերաբերեալ:

Հանրայայտ է, որ երկարատեւ ընդմիջումից յետոյ, Հայկական հարցը վերաբացուեց Երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ: Այդ խնդրին են նուիրուած Մարտիանի հետեւեալ յօդուածները՝ «Համաշխարհային երկրորդ պատերազմին վախճանը եւ հայերը» (ԺԳ., 1993, էջ 173-197), ինչպէս նաեւ «Արեւմտահայ բռնագրաւուած հողերու հարցը. 1921-1971 թթ.» (Բ., 1971, էջ 17-44): Առաջին յօդուածում հեղինակն անդրադառնում է Եալթայի խորհրդաժողովի ժամանակ (4-11 Փետրուարի 1945) Հայկական հարցի արծարծմանը: Երկրորդ յօդուածում հեղինակը վերլուծում է հայկական հարցի նոր շրջանի (1921-1923) հիմնական արդիւնքները, անդրադառնում Հայկական հարցի վերաբացումին (1945-1951), Կարսի եւ Արտահանի վերաբերեալ տարածքային պահանջներին: Առանձին կանգ է առնում խորհրդային կառավարութեան կողմից հայկական տարածքային պահանջների անտեսման հանգամանքների վրայ:

Նոյն հեղինակի գրչին է պատկանում «ԱՄՆի արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը» ընդարձակածաւալ ուսումնասիրութիւնը, որը յոյս տեսաւ Հանդէսի երկու առանձին համարներում (Զ., 1977-1978, էջ 71-104. ԺԲ., 1992, էջ 107-144): Այստեղ տրոււմ են ԱՄՆի պետական շրջանակների, յատկապէս այդ ժամանակաշրջանի նախագահների (Թէոդոր Ռուզվելթ, Վուտրօ Ուիլսոն, Ուիլիսոմ Հարդինգ, Ֆրանքլին Դելանօ Ռուզվելթ, Հերի Թրումբըն, Ջոն Քենեդի, Լինդըն Ջոնսոն, Ջերրոլդ Ֆորդ, Ջիմի Քարթեր, Ռոնրոլդ Ռեյգըն, Ջորջ

Բուշ) դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ, ինչպես նաև Մերակոյտի եւ Ներկայացուցիչների Տան նիստերում Հայկական դատի արժարժման բոլոր դէպքերը: Մասնաւորապէս քննարկման առարկայ է դարձրել Հայկական ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ տարուող աշխատանքների բովանդակութիւնն ու վեր հանել այդ բնագաւառում կատարուող ջանքերը: 1973ի Յունիսի 25ին ՄԱԿի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովի Խտրականութեան Կանխարգելումի եւ Փոքրամասնութիւնների Պաշտպանութեան Ենթալանձնախումբը մի տեղեկագիր ներկայացրեց Տնտեսական եւ Ընկերային Խորհրդին, որի 30րդ պարբերութիւնը յատկացուած էր Հայկական ցեղասպանութեանը: Մարրլեանը յատուկ յօդուածով՝ «ՄԱԿի 30րդ պարբերութեան ծննդոցը» (ԺԱ., 1991, էջ 10-27) անդրադառնում է 30րդ պարբերութեան պատմութեանը եւ վեր հանում հայերի, մասնաւորապէս իր անձնական ջանքերն այդ պարբերութեան ստեղծման գործում:

Սրանով աւարտում ենք Հանդէսի էջերում ներկայացուած հայոց քաղաքական պատմութեանը նուիրուած պատմագիտական ուսումնասիրութիւնների համառօտ բնութագիրը: Ինչպէս ակներեւ է, կատարուել է նսկայածաւալ աշխատանք, որն ըստ ամենայնի, հարստացրել է հայ պատմագիտութեանը նորանոր ձեռքբերումներով: Թէեւ նշելի է նաեւ, որ Հանդէսը զարմանալիօրէն չըջանցել է Հայոց պատմութեան շատ հիմնահարցեր, անգամ՝ ամբողջ պատմաչրջաններ: Խորհրդային Հայաստանի, արդի հայ ազատագրական շարժումների, այդ թւում Արցախեան շարժման, եւ այլ հարցերի բացակայութիւնն առնուազն տարակուսանքի տեղիք է տալիս եւ չի կարող ունենալ իր արդարացումը:

*
* * *

Հայոց քաղաքական պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւնների կողքին Հանդէսը, բնականաբար, լայնօրէն անդրադարձել է նաեւ պատմագիտութեան օժանդակ առարկաներին, ինչպէս օրինակ հայոց պատմութեան աղբիւրագիտութեանն ու պատմագրութեանը, պատմական աշխարհագրութեանն ու տեղագրութեանը, դրամագիտութեանը, մամուլի պատմութեանն ու գաղթավայրերի խնդիրներին: Անշուշտ, հարցը միայն քանակին չի վերաբերում: Որպէս կարգ այս բնագաւառներին նուիրուած յօդուածները գիտական նորոյթ են: Շատ նիւթեր Հանդէսի միջոցով են դրուել շրջանառութեան մէջ: շատերն էլ առաջին անգամ են ենթարկուել գիտական մշակման:

Հանդէսում մեծ թիւ են կազմում աղբիւրագիտութեանն ու պատմագրութեանը նուիրուած յօդուածները: Հայ ժողովրդի հնագոյն շրջանի եւ միջնադարեան պատմութեան օտար սկզբնաղբիւրների ընդհանուր արժէքաւորմանն է նուիրուած Արշալոյս Թոփալեանի «Օտար մի շարք աղբիւրներ Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին» յօդուածը (ԺԱ., 1991, էջ 28-59): Հեղինակն այստեղ ներկայացրել է հին յունական (Քսենոփոն Աթենացի), բիւզանդական (Պրոկոպիոս Կեսարացի), արաբական (Քալազորի, Եակուբի, Աբու-Եուսուֆ, Աբու-լ-Ֆիդա) տեղեկութիւնները Հայաստանի մասին եւ արժէքաւորել դրանց նշանակութիւնը հայոց պատմութեան շատ հարցեր լուսարանելու գործում: Նմանատիպ ուսումնասիրութիւն է տպագրել նաեւ Երուանդ Մելքոնեանը: Նրա «Զեռագիր յիշատակարանները որպէս Կիլիկիոյ պատմութեան սկզբնաղբիւր» յօդուածում (ԺԴ., 1994, էջ 53-61) մատնացոյց են արուած 1200-1255ին գրուած մի շարք յիշատակարանների տուեալները Կիլիկիայի արքունի իշխանութեան, եկեղեցու, պատմաքաղաքական եւ ռազմական իրադարձութիւնների, հարեւան երկրների պատմութեան, Կիլիկիայի տեղագրութեան ու այլ հարցերի առնչութեամբ: Կիլիկիայի հայկական թագաւորութեան պատմութեան արժէքաւոր, սակայն ուսումնասիրողներին անձանօթ մնացած սկզբնաղբիւրներից է ԺԴ. դարի առաջին կէսի վենետիկցի ազնուական Մարինօ Սանութօ Թորսելլոյի (1270-1343) խաչակրաց արշաւանքներին նուիրուած երկասիրութիւնը: Այստեղ հեղինակն անդրադարձել է նաեւ Հեթումեանների պատմութեան առանձին դրուագների, հայոց եկեղեցու դաւանաբանական սկզբունքներին եւ այլ հարցերի: Այս արժէքաւոր սկզբնաղբիւրը իտալերէնով ներկայացրել են Մարթինիանօ Փելլեկրինօ եւ Սամիրա Ռոնքալիաները (ԺԳ., 1993, էջ 227-231): Նմանաբնոյթ են նաեւ ԺԴ. դ. իտալացի հեղինակ Ժաքոպօ դը Վերոնի վկայութիւնները Կիլիկեան Հայաստանի մասին, որը նոյնպէս հրատարակել է Մարթինիանօ Ռոնքալիան (ԺԸ., 1998, էջ 227-232):

Հայ դասական մատենագիրների գործունէութեանն ու գիտական վաստակի բնութագրմանն են նուիրուած Վրէժ Ներսէսեանի «Մովսէս Խորենացի եւ Ղազար Փարպեցի» (ԺԸ., 1998, էջ 195-206), Հ. Լեւոն Զեքիեանի «Մովսէս Խորենացիի աշխարհայեացքը եւ պատմութեան ըմբռնումը» (ԺԱ., 1991, էջ 253-280), Վրէժ Վարդանեանի «Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան կարծեցեալ շորրորդ գրքի վերաբերեալ մի վարկածի շուրջը» (ԺԸ., 1998, էջ 379-393), Մինաս Գոճայեանի «Յովնան Մայրազոմեցի՝ միջնադարու մեծ ճառագիրը» (Ե., 1974, էջ 213-224) եւ այլ յօդուածներ: Փաւստոս Բուզանդի Պատմութեան հրատարակութիւններն ու ձեռագիրերը մանրամասն ներկայացուած են Գէորգ Տէր Վարդանեանի յօդուածում (ԺԹ., 1999, էջ 9-63), իսկ Պետ-

րոս Յովհաննիսեանը քննարկման առարկայ է դարձրել Մովսէս Խորենացու բրեննեան լատիներէն կարծեցեալ թարգմանութեան հարցը եւ ցրել հայագիտութեան մէջ այդ կապակցութեամբ գոյութիւն ունեցող շփոթը (ԺԹ., 1999, էջ 123-140): Հանդէսի նոյն համարում լոյս է տեսել Ռաֆայէլ Մաթեոսեանի յօդուածը՝ «Մովսէս Խորենացու վկայութիւնները Մամիկոնեան-Խաղրակեան տոհմի ծագման մասին» (էջ 91-105), որը ուշադրութիւն է հրաւիրում հայ ազնուական տոհմերից մէկի՝ Մամիկոնեանների ծագման խնդրին: Երախտաշատ պատմաբան Լեւոն Խաչիկեանի «Հայ միջնադարեան վանից պատմութեանց գնահատման հարցի շուրջ» յօդուածում (Ժ., 1982-1984, էջ 9-19) քննական վերլուծութեան է ենթարկուել Ժ. դարի սկզբներին շարադրուած մի ուշագրաւ սկզբնաղբիւր՝ Հոգեաց վանքի պատմութիւնը: Հեղինակը որոշել է գրուածքի պատմական արժէքը եւ ցոյց տուել նրա նշանակութիւնը Ժ. դարի Հայաստանի քաղաքական, կրօնական ու մշակութային պատմութեան ուղեծիրում: Նոր Զուղայի Սրբ. Ամենափրկիչ վանքի արխիւում պահուող աղբիւրագիտական նիւթերի թուղթիկ նկարագրութեանն է նուիրուած Լեւոն Մինասեանի «Սրբ. Ամենափրկիչ վանքի արխիւը եւ էմին Յովսէփ էմինի երկու նամակները» յօդուածը (Ժ., 1982-1984, էջ 281-286): Հեղինակը, որ 1972-1980ի ընթացքում գիտական դասաւորման է ենթարկել նշուած արխիւի նիւթերը, հաւաստում է դրա գիտական հսկայական նշանակութիւնը հայոց պատմութեան ուսումնասիրութեան գործում:

Աղբիւրագիտութեան սերտօրէն աղերսւում են փաստաթղթերի եւ պատմագիտական նիւթերի հրապարակումները, որոնցմով այնքան հարուստ են Հանդէսի համարները: Պէտք է շեշտել, որ հրապարակուող նիւթերը մեծիմասամբ գիտական նորոյթ են եւ Հանդէսի միջոցով է որ դրանք դրւում են շրջանառութեան մէջ: Հրապարակուող աղբիւրագիտական նիւթերը հիմնականում վերաբերում են ԺԹ. դ. երկրորդ կէսի եւ Ի. դարի սկզբների հայ ժողովրդի պատմութեան առանցքային նշանակութիւն ունեցող իրադարձութիւններին՝ առաւելապէս Հայկական ցեղասպանութեանը: Յատկապէս նշելի են Պէյլերեանի մի շարք հրապարակումները՝ «ԺԹ. դարու կէսի Հայաստանի, Քիւրտիստանի եւ Պարսկաստանի քրիստոնեայ ժողովուրդներուն մասին անտիպ տեղեկութիւններ» (ԺԼ., 1998, էջ 233-252), «Անգլիացի հիւպատոսի մը հետաքրքրական վկայութիւնները Արեւմտահայաստանի դաւառներուն մասին ԺԼ. դարուն» (ԺԲ., 1992, էջ 173-208), «Աւստրիացի սպայի մը 1895 տարուոյ կոտորածներու վերաբերեալ վկայութիւնը» (ԺԵ., 1995, էջ 173-182): Առաջին հրապարակումը, որ Ֆրանսիայի էրզրումի հիւպատոս Հանրի Սուլանթ-Պոտէնի տեղեկագիրն է առ արտաքին գործոց նախարար Կիզոն (դարուն 1843) արժէ-

քաւոր տեղեկութիւններ է պարունակում Օսմանեան կայսրութիւնում հայ ժողովրդի կացութեան մասին: Այստեղ մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում յատկապէս հայ-քրդական յարաբերութիւններին նուիրուած հատուածները: Երկրորդ հրատարակումը էրզրումի անգլիական հիւպատոս Թէյլորի տեղեկագիրն է՝ ուղղուած Մեծն Բրիտանիայի արտաքին գործոց նախարարութեանը (Մարտ 1869): Սոյն տեղեկագիրը դեռեւս 1877ին լոյս էր տեսել անգլիական *Կապոյտ գրքի մէջ*, որտեղից էլ ժամանակակից թուրք պատմաբան Պիլալ Շիմշիրը այն հրատարակել է 1982ին, սակայն գանց առնելով թուրքերին աննպաստ հատուածներն ու արտայայտութիւնները: Բերելով նաեւ թուրք հետազոտողի հրատարակած եւ գանց առած հատուածները՝ Պէյլերեանը մատնացոյց է անում նրա միտումնաւոր ու անթոյլատրելի մօտեցումը պատմական սկզբնաղբիւրներին, միտում որը յատուկ է նմանատիպ թուրքական բոլոր հրատարակութիւններին: Երրորդ հրատարակումը, որ մի տեղեկագիր է, աշխատասիրողը յայտնաբերել է Փարիզի Միջազգային եւ ժամանակակից Փաստաթղթերի Գրադարանում եւ հայերէն թարգմանութեամբ հրատարակել *Բանբեր Հայաստանի արխիւների հանդէսի* 1971ի No. 1ում (էջ 120-107): Իսկ այստեղ Պէյլերեանը հրատարակել է նաեւ Ֆրանսերէն բնագիրը, որ վերաբերում է էրզրումի 1895ի կոտորածներին:

1915ի հայկական կոտորածների վերաբերեալ եզակի ու արժէքաւոր վաւերագրեր են պարունակում Լեւոն Վարդանի հրատարակած «Ամբաստանագիր-տեղեկագիր» (ԺԵ., 1995, էջ 497-564) ու «Ապանդանոց նահանգը» (ԺԳ., 1993, էջ 346-359), Արա Սարաֆեանի «Մարտինի ջարդերը» (ԺԸ., 1998, էջ 261-292) եւ Անահիտ Տէր-Մինասեանի «Մուշը 1915ին՝ ըստ Ալմա Եոհանսոնի» (ԺԵ., 1995, էջ 57-85) հրատարակումներում: Զօրավար Արամ Գարամանուկեանի «Հայկական լեզէոնը պատմական, իրաւական եւ քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր» յղուածը (Ե., 1974, էջ 39-90) ուղեկցւում է Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարութեան արխիւներից քաղուած բազմաթիւ արժէքաւոր վաւերագրերով, որոնք վերաբերում են 1915-1918ի իրադարձութիւններին: 1918-1920ի վաւերագրերի բացակայութիւնը յղուածագիրը բացատրում է Բ. աշխարհամարտի տարիներին այդ փաստաթղթերի կորստով:

Բրիտանական Գրադարանի արխիւից յայտնաբերուած երկու կաւերնոր անտիպ փաստաթուղթ է հրատարակել Վրէժ Ներսէսեանը (ԺԳ., 1993, էջ 217-225): Փաստաթղթերից առաջինը տեղեկագիր է, որը 1920ի Դեկտեմբերին պատրաստել էր Թիֆլիսում Իտալիայի ներկայացուցիչ Լուիջի Վիլլարին՝ ուղղուած Մեծն Բրիտանիայի արտաքին գործոց նախարարութեանը, երկրորդը՝ Հայաստանի Հանրապետու-

Թեան Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանի 24 Դեկտեմբերի 1920 թուակիր նամակն է ուղղուած լորդ Ռ. Սեսիլին: Վաւերագրերն արժէքաւոր տեղեկութիւններ են յայտնում 1920ի աշնանը քեմալականների Հայաստան կատարած արշաւանքի ու Հայաստանի խորհրդայնացման մասին: Արծուի Բախչինեանի հրապարակուած ընթերցողներին է ներկայացնում շուէզ հասարակական գործիչ, աստուածաբան, հայ ժողովրդի մեծ բարեկամ Նաթանայէլ Բեսքովի վեց նամակները՝ վերցուած Ուփսալայի համալսարանի արխիւային բաժնից (ԺԹ., 1999, էջ 393-405): Բեսքովի անունը անիրաւացիօրէն մոռացուել է հայոց մօտ, մինչդեռ նա հսկայական շնորհակալ աշխատանք է կատարել Եղեռնից փրկուած որբերի եւ ալքիների համախմբման, նրանց համար կեանքի ու աշխատանքի պայմաններ ապահովելու կազմակերպման գործում:

Ի տարբերութիւն հայկական աւանդական կուսակցութիւնների, ընթերցող հասարակայնութեանը, պատմութեանը աւելի քիչ են յայտնի Հայ ժողովրդական կուսակցութեան ծրագրերն ու կանոնադրութիւնը: Այս բացը լրացնելու նպատակ է հետապնդում Արա Սանճեանի «Հայ ժողովրդային կուսակցութեան ծրագրային փաստաթուղթերը» հրապարակումը (ԺԲ., 1992, էջ 309-338): Այստեղ ներկայացուած են սոյն կուսակցութեան 1917 եւ 1919 թուականների ծրագրերն ու կանոնադրութիւնները:

Բ. համընդհանուր պատերազմի աւարտից յետոյ Հայկական հարցի արծարծման, Թուրքիայի կողմից բռնազաւթուած հայկական հողերի յետվերադարձի եւ յարակից այլ խնդիրների վերաբերեալ յուժ կարեւորագոյն տուեալներ է պարունակում Մարրլեանի «Մեծն Բրիտանիա եւ Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անունով 1945ին կատարուած հողային պահանջը. բրիտանական վաւերաթուղթ մը» յօդուածը (ԺԸ., 1998, էջ 293-318): Սա Անկարայի մօտ բրիտանական դեսպանատան մամուլ կցորդ Ալլէնի տեղեկագիրն է՝ ուղղուած իր կառավարութեանը (4 Ապրիլ 1946): Հետաքրքրական է տեղեկագրի այն մօտեցումը, թէ Թուրքիայից Հայաստանի հողային պահանջը աւելի պատմական է ու լուրջ, քան վրացականը:

Հայ ազանաւոր պատմաբան Նիկողայոս Աղոնցի երկու նորայայտ նամակներ հրապարակել է Պետրոս Յովհաննիսեանը (ԺԳ., 1993, էջ 107-111): Նա հրապարակել է նաեւ Համագգային Մշակութային Միութեան Բէյրութի գրական պահոցում իր կողմից յայտնաբերուած անլանիպատմաբանի մէկ անտիպ ուսումնասիրութիւնը եւս՝ նուիրուած ԺԹ. դ. վերջերին Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան անձանօթ մանրամասներին (ԺԷ., 1997, էջ 263-286):

Հանդէսն անդրադարձել է նաեւ պատմագրութեան առանձին հարցերի, թէեւ նկատելի է, որ աղբիւրագիտութեան հետ համեմատած նման յօդուածներն այստեղ աւելի սակաւադէպ են: Թոփալեանը՝ «Հինգերորդ դարի հայ պատմագրութեան հետապնդած նպատակները» յօդուածում (ԺԴ. 1994, էջ 63-79) արժէքաւորել է Ոսկեդարի պատմիչների քաղաքական-հայրենասիրական հայեացքները: Նոյն հեղինակի գրչին է պատկանում «Համրտեան «Ձուլումի» քաղաքականութեան արտացոլումը արաբական արդի պատմագրութեան մէջ» ուսումնասիրութիւնը (ԺԵ., 1995, էջ 135-148): Թոփալեանն այստեղ ներկայացրել է արդի արաբական պատմագրութեան տեսակէտերը ԺԹ. դ. վերջերի հայկական կոտորածների եւ Հայկական հարցի առնչութեամբ ու նշել, որ հայոց պատմութեան այդ ողբերգական իրադարձութիւններն արաբական պատմագրութեան մէջ մեկնաբանուել են գիտական անաչառութեամբ եւ պատմականութեան արդարացի դիրքերից: Նոյն հարցերին է նուիրուած նաեւ Թոփալեանի «Հայարաբական քաղաքական յարաբերութիւնները արաբական փաստաթղթերի լոյսի տակ. Ի. դարի սկիզբ» յօդուածը (ԺԲ., 1992, էջ 297-308):

Հանդէսի մնայուն ու արժէքաւոր աշխատակիցներից Լեւոն Վարդանը յօդուած է տպագրել պատմութեան, պատմական գիտութեան ու յարակից խնդիրների վերաբերեալ («Պատմութեան, պատմագրութեան ու այլ բաներու մասին», ԺԷ., 1997, էջ 157-204): Իրաւացիօրէն շեշտելով, թէ պատմագրութիւնը ոչ աւելի, ոչ պակաս «գիտութիւն մըն է ամէն բանէ առաջ» հեղինակը մերժում է քաղաքականացուած այն տեսակէտը, թէ իբր պատմագիտութիւնը կեղծ գիտութիւն է:

Անշուշտ, սպասելի էր որ Հանդէսն իր էջերը լայնօրէն բացէր Սփիւռքի պատմութեան ու հիմնական խնդիրներին նուիրուած ուսումնասիրութիւնների առջեւ: Եւ դա իրողութիւն է: Դժուար է մատնացոյց անել Հանդէսի որեւէ համար, որտեղ չլինեն Սփիւռքի պատմութեանը նուիրուած տարաբնոյթ յօդուածներ: Հիմնականում դժբանք վերաբերում են Սփիւռքի նորագոյն պատմութեան հարցերին, թէեւ առանձին յօդուածներ կան նաեւ միջնադարեան հայկական գաղթավայրերի վերաբերեալ: Ընդհանրացնող-տեսական բնոյթ ունի Վարդգէս Համագասպեանի «Հայ գաղթավայրերի առաջացումը» յօդուածը (Բ., 1971, էջ 81-98), որտեղ ներկայացւում են հայկական գաղթականութեան առաջացման պատճառները, գաղթականութեան ուղիներն ու հանգրուանները: Նշանաւոր պատմաբան-բանասէր Յակոբ Սիրունին իր «Հայկական տեղաշարժերը Արեւելեան Եւրոպայի քարտէսին վրայ» յօդուածում (Գ. 1972, էջ 55-90) անդրադառնում է Մոլդովայի, Լեհաստանի, Վալախիայի, Տրանսիլվանիայի ու Բուլղարիայի հայկական գաղթավայրերի կազմաւորման ու զարգացման հարցե-

րին, որոնք դիտարկում են ժԳ.-ժԹ. դարերի սահմանագծում: Գոն-տէի իշխան Ե. Պ. Ա. Տը Պուրպոնի անգլերէնով «Լիրանանի տասը հայ իշխանուհիները (1186-1312)» (Զ., 1977-1978, էջ 159-168) եւ Պերճ Սապ-պաղեանի «Հայագգի աթարեկ եւ Մուսուլի սուլթան Պատրէտ Տին Լուլու» (Թ., 1981, էջ 121-130) յօդուածները հետաքրքրական են հայ-արարական պատմական կապերի տեսակէտից:

Լեւոն Մինասեանը երկու յօդուած է տպագրել նուիրուած իրանա-հայ գաղթավայրերին, որոնք կրում են «Փերիա գաւառը» (ժԳ., 1994, էջ 389-352) եւ «Իրանի 1906 թ. սահմանադրութիւնը եւ հայերի բերած մասնակցութիւնը 1906-1911 թթ. սահմանադրական յեղափոխութեան» (ժԸ., 1998, էջ 121-130) խորագրերը: Առաջին յօդուածում հեղինակը ներկայացնում է Փերիա գաւառի վայրն ու աշխարհագրական դիրքը, թուարկում հայաբնակ գիւղերը, անդրադառնում կրօնա-մշակութային կեանքին: Երկրորդ յօդուածում մանրամասն ներկայացնում են իրանական յեղափոխութեան նախադրեալները, յեղափոխութեան ընթացքը, հայերի մասնակցութիւնը յեղափոխական շարժումներին. մասնաւորապէս գնահատուած է Եփրեմ խանի տեղն ու դերը այդ ժամանակաշրջանի իրանի պատմութեան մէջ: Տրւում է Սահմանադրական կոիւնների ընթացքում զոհուած այն հայ մարտիկների անունները, որոնք յայտնի են (55 հոգի): Մինասեանը առանձին յօդուած է տպագրել նաեւ Նոր Զուղայի 12 հին տների վերաբերեալ (ժԷ., 1997, էջ 219-243):

Մեծ հետաքրքրութեամբ է ընթերցում Շուշանիկ Խաչիկեանի «1667 թ. հայ-ուսական առեւտրական պայմանագիրը եւ Նոր Զուղայի ինքնավար մարմինները» (Ը., 1980, էջ 259-288) յօդուածը: Մանրամասն անդրադառնալով հայ-ուսական առեւտրատնտեսական յարաբերութիւններին ու վեր հանելով այդ ասպարէզում ջուղահայ առեւտրականների դերը՝ ուսումնասիրողը մերժում է պատմագիտութեան մէջ լայն տարածում գտած այն տեսակէտը, թէ իբր ժԷ. դարի 60-ականներին Նոր Զուղայում գոյութիւն է ունեցել առեւտրական հօր կազմակերպութիւն (կոմպանիա):

Ինչպէս միշտ փաստաշատ ու պատմական նիւթի տեսակէտից յագեցուած է Լեւոն Վարդանի «Պոլսահայութիւնը, Բարձրագոյն դուռը եւ այլ բաներ. 30 Սեպտեմբեր 1895 թ.» ծաւալուն ուսումնասիրութիւնը (աւելի քան 115 էջ), որ յաջորդաբար լոյս տեսաւ Հանգէսի երեք համարներում (ժԲ., 1992, էջ 145-172. ժԳ., 1993, էջ 129-171. ժԴ., 1994, էջ 99-145): Որպէս ուսումնասիրութեան առանցք պատմաբանը վերցրել է միայն 1895ի իրադարձութիւնները, որոնք ճակատագրական եղան պոլսահայութեան ու ընդհանրապէս հայ ժողովրդի կեանքում: Սոյն յօդուածաշարի հետ սերտ աղերսներ ունի Անդրանիկ Տագէսեանի

«Հայերը յետ-պատերազմեան Թուրքիոյ մէջ. 1919-1938» անգլերէն ուսումնասիրութիւնը (ԺԵ., 1995, էջ 401-431. ԺԷ., 1997, էջ 127-156): Այստեղ ներակայացուած է պատմագիտութեան մէջ համարեա չանդրադարձուած այնպիսի հարց, ինչպիսին ցեղասպանութիւնից յետոյ Թուրքիայում մնացած հայութեան կացութիւնն է: Առաջին մասում հեղինակը ներկայացնում է Վանի, Բիթլիսի, Մուշի, Սասունի, Էրզրումի, Երզնկայի, Դերջանի, Տիգրանակերտի, Խարբերդի, Արաբկիրի, Տելերիկի, Մալաթիայի, Ակնի, Սերաստիայի, Ամասիայի, Մարզուանի եւ Թոքատի, իսկ երկրորդ մասում՝ Կեսարիայի, Գոնիայի, Եոզկաթի, Անկարայի, Տրապիզոնի, Սամսոնի, Էսքիշեհիւրի, Եւրոպական Թուրքիայի եւ միւս շրջանների հայութեան տնտեսական, կրօնական, մշակութային կեանքը: Հեղինակն անդրադառնում է նաեւ մնացեալ հայութեան թուաքանակին, քեմալականների կողմից նրանց դուրս մղման քաղաքականութեան հարցերին:

Քեմալական իշխանութիւնների հակահայ քաղաքականութեան, Թուրքիայում դեռեւս մնացած հայութեան նկատմամբ կիրառուած բռնութիւնների ու հալածանքների վերաբերեալ ուշագրաւ յօդուած է տպագրել Մարրլեանը՝ «Թուրքիոյ ներքին գաւառներու հայոց պարտադիր արտագաղթը. 1929-1930 թթ.» խորագրի ներքոյ (Գ., 1972, էջ 101-118): Յօդուածագիրը եզրակացնում է, թէ քեմալական Թուրքիան հարազատ ժառանգորդն էր Արդուլ Համիտ Բ-ի եւ երիտթուրքերի, իսկ քեմալականների կազմակերպած հայկական կոտորածներն ու հայերի պարտադիր արտագաղթերը «Թուրքիան թուրքերուն» կարգախօսի ծրագրի իրականացման մասն էին կազմում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեակին սփիւռքահայութեան դիրքորոշումներին ու քաղաքական ակնկալութիւններին են նուիրուած նաեւ Մարրլեանի ուշագրաւ երկու յօդուածները՝ «Սփիւռքահայ քաղաքական խմորումները համաշխարային Բ. պատերազմի նախօրեակին. 1933-1939 թթ.» (Է., 1979, էջ 85-110) եւ «Սփիւռքահայ դիրքորոշումները՝ համաշխարհային Բ. պատերազմի սկզբնաւորութեան 1939-1940» (Ը., 1980, էջ 127-146): Մուսա Լեւոն երկրորդ արտագաղթի եւ Այնճար հայաւանի հիմնադրման պատմութեանն է նուիրուած Լեւոն Վարդանի «Մուսա Լեւոն երկրորդ արտագաղթը» (Ը., 1980, էջ 147-198), յօդուածը, որը գրուած է նորայայտ փաստաթղթերի հիման վրայ: Յօդուածի վերջում գետեղուած են 34 արխիւային վաւերագրեր, որոնք վերաբերում են Մուսա Լեւոն վեց գիւղերի արտագաղթին:

Արգենտինայի հայկական գաղթավայրերի պատմութեան հարցերը դիտարկուած են Վարդան Մատթէոսեանի «Հայերը Արժանթինի մէջ. նշմարներ մեկնարանութեան մը համար» (ԺԷ., 1997, էջ 375-391)

և «Պուենոս Այրեսի Հայ Ազգային Միութիւնը. 1918-1920» (ԺԸ., 1998, էջ 131-150) ուսումնասիրութիւններում:

Հանդէսը լայնօրէն անդրադարձել է նաեւ Հայ պարբերական մամուլի պատմութեան հարցերին: Այս բնագաւառում անուրանալի ականդ ունի անխոնջ հետազոտող Ժիրայր Դանիէլեանը, որը շուրջ մէկ տասնեակ յօդուած է տպագրել Հանդէսի տարրեր համարներում: Առանձնապէս արժէքաւոր են նրա «Ակնարկ լիբանանահայ մամուլի պատմութեան» (Դ., 1973, էջ 237-282), «Հայ պարբերական մամուլի հարցեր» (Զ., 1977-1978, էջ 267-320), «Սփիւռքահայ նոր պարբերական մամուլը 1967-1980 թուականներուն» (Լ., 1980, էջ 301-324. Թ., 1981, էջ 253-294), «Հայ լրագրութեան առաջին պատմարանը» (Ժ., 1982-1984, էջ 267-280), «Ստեփան Ոսկանի Արեւելք հանդէսի առեղծուածը» (ԺԳ., 1993, էջ 233-250) եւլն.: Առանձին գաղթավայրերի հայկական մամուլի պատմութեանն են նուիրուած Արտաշէս Տէր Սաչատուրեանի «Լիբանանահայ մամուլի 50 տարին. 1921-1971 թթ.» (Բ., 1971, էջ 263-296), եւ «Սուրիահայ մամուլի պատմութիւն» (Գ., 1972, էջ 195-230), Մատթէոսեանի «Հարաւային Ամերիկայի հայ մամուլը, սկիզբէն մինչեւ 1950» (ԺԹ., 1999, էջ 197-245), Լեւոն Մինասեանի «Համառօտ ակնարկ ԺԹ. դարում Կալկաթայում տպագրուած օրացոյցների վրայ» (Թ., 1981, էջ 311-314) ուսումնասիրութիւնները: Սրանցից պարզուում է, որ 1921-1971 թուականների ընթացքում Լիբանանում լոյս են տեսել հայկական 152 թերթ եւ 19 տարեգիրք, 1913-1970 թուականների ընթացքում Սիրիայում՝ 75 թերթ եւ մէկ տասնեակ տարեգրքեր, Կալկաթայում՝ 21 օրացոյց, որոնք իրականում աւելի շուտ եղել են տարեգրքեր, քան թէ օրացոյցներ: Պէպօ Սիմոնեանն անդրադարձել է, ճիշդ է շատ կարճ կեանք ունեցած, սակայն այնքան աղմկայարոյց Փարիզի Մենք ամսաթերթի (ԺԲ., 1992, էջ 209-226), իսկ Տազսեանը՝ կիպրահայ Յենարան շարաթաթերթի (ԺԴ., 1993, էջ 251-262) պատմութեան հարցերին: Միհրան Մինասեանի յօդուածը «Հայ պարբերական մամուլի նորայայտ անուններ» (Թ., 1981, էջ 295-304), գիտական շրջանակներին է ներկայացնում 35 անուն հայկական պարբերականներ, որոնք մինչ այդ մնացել էին անյայտ եւ տեղ չէին գտել մասնագիտական գրականութեան ու ցանկերի մէջ: Չափազանց հետաքրքրական է Գէորգ Եազըճեանի «Սորհրդային միութեան հայկական ազատ մամուլի սկզբնաւորումը 1985-1989 թթ.» յօդուածը (ԺԹ., 1999, էջ 247-301), որտեղ հեղինակն անդրադարձել է ինչպէս Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի, այնպէս էլ Սորհրդային ներքին սփիւռքի հայկական ազատ մամուլի, այդ թւում՝ ինքնահրատ պարբերականների, հրատարակութեան, ուղղուածութեան ու նշանակութեան հարցերին:

Հանդէսում որոշ թիւ են կազմում նաեւ պատմա-աշխարհագրական ու տեղագրական բնոյթի յօդուածները: Պատմաբան Արամ Տէր Ղեւոնդեանի «Մասիս լեռան մասին արարական գրոյցը» (Բ., 1971, էջ 9-16) ուսումնասիրութիւնում ներկայացւում եւ վերլուծւում են արարական հեղինակների վկայութիւնները Մասիս լեռան, Արաքս գետի եւ հայկական այլ տեղանունների վերաբերեալ: Քննելով Մասիս լեռան մասին արարական գրոյցը՝ հեղինակը գալիս է այն եզրակացութեան, որ այն արարական միջավայր է փոխանցուել հայ իրականութիւնից: Ինկրիտ Սրմասնի անգլերէն յօդուածը՝ «Լեռը, երկիրը, եւ հնութիւնները» (ԺԸ., 1998, էջ 89-120) ներկայացնում է ԺԹ. դարի կէսերից մինչեւ Ի. դարի սկզբները Հայաստան այցելած եւրոպացի ճանապարհորդների եւ ուխտաւորների տպաւորութիւններն ու նկարագրութիւնները: Յօդուածում զգալի նիւթ կայ տեղագրութեան եւ պատմական-ճարտարապետական յուշարձանների վերաբերեալ: Աշխարհացոյցի համապատասխան տուեանների պատմա-աշխարհագրական մանրակրկիտ վերլուծութեան հիման վրայ Բարկէն Յարութիւնեանը անդրադարձել է Մեծ Հայքի Մոփք նահանգի աշխարհագրական դիրքին, վարչական ձեւաւորման հարցերին (ԺԷ., 1997, էջ 11-43): Մեծ հետաքրքրութեամբ է ընթերցւում նոյն հեղինակի «Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրութեան հարցի շուրջ» յօդուածը (ԺԴ., 1994, էջ 11-40), որտեղ հայագէտը ցոյց է տալիս, թէ դեռեւս զարգացած միջնադարում հայ իրականութեան մէջ Տիգրանակերտ եւ Ամիդ քաղաքներն անիրաւացի նոյնացուել են: Այդ շփոթը տեղ է գտել նաեւ յետագայ եւ անգամ մեր օրերի պատմագիտական աշխատութիւններում: Հեղինակը համոզիչ փաստերով միմեանցից տարբերակում է նաեւ Նփրկերտ եւ Տիգրանակերտ, Ֆարկին եւ Տիգրանակերտ քաղաքները եւ հայոց հնագոյն մայրաքաղաքը տեղադրում է պատմական Նիկեփորիս (Խարազան) գետի աջ ափին բարձրացող եւ ներկայումս Կալէ (= բերդ) կոչուող լեռնակի շրջակայքում: Սուրէն Մահակեանը «Անթապ (Andiabe)- Այնթապ. պատմաբանասիրական ճշգրտումներ» (Թ., 1981, էջ 181-224) յօդուածում անդրադառնում է Անթապ տեղանուն հարցին եւ ցոյց տալիս, որ Այնթապը նրանից տարբեր բնակավայր է: Եօդուածում հեղինակը բերում է նաեւ Անթապի բանահիւսութեան նմուշները, քննում է բարբառը եւ յարակից խնդիրներ: Զէյթունի տեղագրութիւնը, դիրքը, բնակավայրերը, օգտակար հանածոները, տընտեսութիւնը եւ յարակից այլ հարցեր քննարկման առարկայ են դարձել Արամ Շորվոյլեանի «Ուրուագիծ Զէյթունի պատմութեան» (Գ., 1972, էջ 231-257) յօդուածում: «Տարօնի Ս. Յովհաննէս (Եղրդուտի) վանքի 1445 թուականի կոնդակը (պատմա-աշխարհագրական ակնարկ)» (ԺԷ., 1997, էջ 45-68) յօդուածը, որի հեղինակը Գեղամ Բաղալ-

եանն է, նուիրուած է տուեալ վանքի հոգարարձութեան ներքոյ գտնուող գաւառների եւ գիւղերի տեղագրութեանը: ԺԹ. դարի 70ականներին վանքի թեմին ենթակայ էին 116 գիւղեր, որոնցից մի մասը յետագայում հայթափուում է, իսկ 1915ից յետոյ բոլոր գիւղերն աւերուում են, իսկ բնակչութիւնը սրի քաշուում:

Ուրուբարեանի եւ Մուրադ Հասրաթեանի «Խաղավանք-Խաթրա-վանք» (Ժ., 1982-1984, էջ 21-50) յօդուածը նուիրուած է միջնադարեան Արցախի ճարտարապետական հիանալի համալիրներից մէկի՝ Խաթրա-վանքի տեղագրութեանն ու յուշարձաններին: Վանքը կառուցուել էր դեռեւս Ծ. դարում եւ շատ նշանաւոր էր իր խաղացած դերով, սա-կայն մասնագիտական գրականութեան մէջ սակաւ են նրա վերաբեր-եալ վերլուծութիւնները: Սոյն յօդուածը այս ուղղութեամբ առաջին փորձն է: Հասրաթեանն առանձին յօդուած ունի, որ նուիրուած է Միւնիքի նշանաւոր ամրոցներից մէկի՝ Հալիձորի տեղագրութեանն ու կառույցներին (Գ., 1972, էջ 139-149):

Հանգէսը բազմաթիւ համարներում իր էջերը լայնօրէն տրամադ-րել է հայկական դրամագիտութեան հարցերին, որոնք վերաբերում են երկու պատմաչրջանների՝ Արտաշէսեան եւ Կիլիկեան: Գիտական առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում Ասպետ Տօնապետ-եանի յօդուածները, որոնք վերաբերում են Արտաշէսեանների դրամ-ներին: Նշելի է, որ հեղինակին է պատկանում Արտաշէսեանների դրամների ամէնամեծ մասնաւոր հաւաքածուն եւ նրա ուսումնասի-րութիւնների առարկայ են դարձել հիմնականում սեփական օրինակ-ները, որոնք այս ճանապարհով են ներկայացել գիտական աշխարհին: Այսպէս, «Արտաշէսեան հարստութեան հիմնադիր՝ Արտաշէս Ա.ի պղնձէ դրամը» (Բ., 1971, էջ 135-143) ուսումնասիրութիւնը կատար-ւել է նման մի եզակի օրինակի հիման վրայ: Ինչպէս յայտնի է, Արտա-շէս Ա.ից (մ.թ.ա. 189-մ.թ.ա. 180) դրամական որեւէ միւսը յայտնի չէ: Հեղինակն իր անձնական դրամագիտական հաւաքածուի պղնձէ դրա-մի մանրամասն ուսումնասիրութեան միջոցով յանգել է այն եզրակա-ցութեան, որ այն պատկանում է Արտաշէս Ա.ին եւ որպէս այդպիսին, այն միակն է Արտաշէսեան դրամների շարքում: Ծիշդ է, տասը տարի անց, մէկ այլ առիթով, հեղինակն ինքն է մերժում այս գիւտը¹, սա-կայն, անկասկած է դրամի եզակի լինելու հանգամանքը: Նոյն հեղի-նակի գրչին է պատկանում Տիգրան Բ.ի եւ Տիգրան Դ.ի (մ.թ.ա. 8-5 եւ մ.թ.ա. 2-մ.թ. 1) քսաներկու անտիպ մնացած դրամների նկարագրու-թիւնը, որոնցից եօթն ամբողջութեամբ տարբերուում են նախապէս հրատարակուած նոյնանուն թագաւորների դրամներից (Ը., 1980, էջ 249-258): Հեղինակն առանձին յօդուածով ներկայացրել է նաեւ Տիգ-րան Ա.ի (մ.թ.ա. 115-95) երկու, Տիգրան Բ.ի տաս եւ Տիգրան Գ.ի

(մ.թ.ա. 20-մաս 8) ութ դրամների մէկ այլ հաւաքածու, որտեղ առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում Տիգրան Գ-ի հազուագիւտ դրամները (է., 1979, էջ 131-140): Տօնապետեանը ուսումնասիրել է նաեւ Արտաշէսեան վերջին թագաւորների՝ Արտաւազդ Գ-ի (մ.թ.ա. 5-2) չորս (ժ., 1982-1984, էջ 193-202), Տիգրան Դ-ի՝ վեց, Տիգրան Դ-ի եւ Երատոյի՝ ութ, Տիգրան Դ-ի եւ Օգոստոսի, ինչպէս նաեւ Տիգրան Ե-ի՝ (մ.թ. 6-?) մէկական (Ա., 1970, էջ 74-92) դրամները:

Հայոց դրամագիտութեան եւ ընդհանրապէս հին Հայոց պատմութեան ամէնաառեղծուածային խնդիրներից է Տիգրան Դ-ի եւ Երատոյի արիւնակցական հարցը: Դրամագէտ Սապպաղեանը փորձել է այն լուծել դրամագիտական նիւթի օգնութեամբ եւ հրատարակել «Տիգրան Դ-ի եւ Երատոյի արիւնակցական կապերու հարցին շուրջը» (է., 1979, էջ 121-130) յօդուածը: Ի վերջոյ, հեղինակը եկել է այն եզրակացութեան, որ Երատոյի արքայաքոյր եւ ամուսին լինելու վարկածը մնում է վիճելի եւ կարօտ է լրացուցիչ պրպտումների ու լուսարանութիւնների:

«Տիգրան Բ. Մեծ եւ Դամասկոսի դրամահատարանը» խորագրով ուշագրաւ յօդուած է հրատարակել Եղիա Ներսէսեանը (ժԹ., 1999, էջ 155-170): Հեղինակը յատուկ քննարկման առարկայ է դարձրել Տիգրան Մեծի այն դրամները, որոնք հատուել են Դամասկոսում կամ շրջակայքում: Մանրամասն ներկայացուել են Տիգրան Մեծի դամասկոսեան չորեքդրամները, դրախմաները եւ պղնձի միաւորները, ցոյց են տրուել դրանց առանձնայատկութիւնները, վերծանուել խորագրերը: Հետաքրքիր է հեղինակի այն պնդումը, թէ Տիգրան Մեծի օրօք Դամասկոսում եւ շրջակայքում միաժամանակ գործում էին մէկից աւելի դրամահատարաններ, որն ապացուցում է, թէ հայկական տէրութիւնն ունեցել է դրամական հզօր համակարգ:

Յայտնի է, որ Արտաշէսեաններից յետոյ դրամահատութիւնը Հայաստանում ընդհատուեց: Բոլոր դէպքերում ցայսօր անյայտ է մնում Արշակունեաց ժամանակաշրջանից հայկական որեւէ դրամ, եթէ բացառենք Արտաշատի քաղաքային դրամները: Բուն Հայաստանում կանոնաւոր դրամահատութիւնը վերականգնուում է արաբական տիրապետութեան շրջանում (Լ.-ժ. դ.դ.), երբ տեղական կարիքները բաւարարելու համար Արմինիա ոստիկանութեան տարրեր քաղաքների՝ Դուինի, Պարտաւի, Գանձակի եւ Թփղիսի դրամահատարաններում թողարկուում են «Արմինիա» մակագրութիւնը կրող պղնձէ դրամներ: Այս դրամների դասակարգմանն ու նկարագրութեանն է նուիրուած Սապպաղեանի «Հայ-արաբական դրամագիտութեան մի քանի հարցերու շուրջ» (Ե., 1974, էջ 161-181) յօդուածը:

Ի տարբերություն Արտաշեսյան դրամների, որոնք մեզ են հասել փոքր քանակությամբ, Կիլիկիայի Հայկական թագաւորութեան դրամներն աւելի թուաշատ են ու բազմազան: Այնուհանդերձ, Հանդէսում տպագրուած նիւթերը վերաբերում են կա՛մ խիստ հազուագիւտ դրամներին եւ կա՛մ էլ անտիպներին: Հրապարակուածներով Հանդէս են եկել դրամագէտներ Սապպաղեանը, Ներսէսեանը եւ Հայ դրամագիտութեան մեծանուն հեղինակներից մէկը՝ Փոլ Չարեհ Պտուկեանը: Սապպաղեանի «Հեթում Ա-ի Հեթում-Չապէլ եւ երկլեզուեան դրամներու մասին» (Ը., 1980, էջ 233-248) յօդուածը նուիրուած է Հայկական դրամագիտութեան եզակի նմուշներ հանդիսացող Հեթում-Չապէլ արծաթէ դրամներին: Պարզուած է, որ Հեթում Ա-ի (1226-1270) մօտ կէս դար տեւող գահակալութեան ընթացքում հատուել են ընդամէնը երկու դրոշմով դրամներ: Հեթում-Չապէլ արծաթէ դրամները լայն տարածում ունէին ամբողջ Փոքր Ասիայում եւ Մերձաւոր Արեւելքում եւ իրենց բարձրորակ մետաղի գտութեամբ ու կշռային առաւելութեամբ համաշխարհային շուկայում մեծ համարում ունէին եւ հանդիսանում էին փոխանակութեան յուսալի միւսուր: Երկլեզուեան դրամները խիստ բացառիկ են: Դրանք պատկանում են Հեթում Ա-ին եւ սելջուկեան միքանի սուլթանների եւ նպատակ են հետապնդել զարգացնել կիլիկեան վաճառականութեան ծաւալումը փոքրասիական շուկաներում: Պտուկեանի յօդուածները նուիրուած են Կիլիկիայի Հեթումեան Սմբատ (1296-1298) (Է., 1979, էջ 111-120) եւ Օշին (1308-1320) (Դ., 1973, էջ 81-96), Նորեան Կոստանդին Գ. (1344-1363), Լեւոն Բռնաւոր (1363-1365) եւ Կոստանդին Դ. (1365-1373) (Գ., 1972, էջ 151-183) թագաւորների դրամներին: Այստեղ առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Լեւոն Բռնաւորին պատկանող դրամների վերլուծութիւնը, որի միջոցով հեղինակը յանգում է ուշագրաւ եզրակացութեան: Պարզուած է, որ պատմագիտութեան մէջ տիրապետող այն կարծիքը, թէ իբր Կոստանդին Գ-ի մահից յետոյ (1363) Լեւոն Բռնաւորը զաւթել է գահը, մերժում է դրամագիտական նիւթերով: Լեւոն Բռնաւորը եղել է Կիլիկիայի Հայոց օրինական թագաւորը եւ իշխել 1363-1365ին: Ներսէսեանը առանձին յօդուած է նուիրել Կիլիկիայի Հայոց ոսկէ դրամներին (ԺԸ., 1998, էջ 57-73): Նա նկարագրել է իրեն յայտնի (1995ի իրավիճակով) 21 դրամներ: Կիլիկիայի Հայոց տիրակալներից ոսկէ դրամներ են հատել Լեւոն Ա. (1198-1219), Լեւոն Բ.-Հեթում, Լեւոն Բ. (1270-1289) եւ Կոստանդին Ա. (1298-1299) թագաւորները: Այս դրամները չափազանց հազուագիւտ են եւ իրենցից մեծ արժէք են ներկայացնում:

Այսպիսով, յօդուածի երկրորդ մասով աշխատեցինք թուուցիկ ներկայացնել Հայկազեան Հայագիտական Հանդէսի պատմագիտութեան

օժանդակ գիտակարգերին առնչուող ուսումնասիրութիւններն ու յօդուածները: Աներկրայելի է, որ Հանդէսը դարձել է արդի հայագիտութեան նշանաւոր խօսնակներից մէկը եւ իր անուրանալի ծառայութիւններն է մատուցում հայ ժողովրդին, հայկական մշակոյթին, հայագիտութեանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ասպետ Տօնապետան, «Արտաւազդ Գ. Արտաշեսեանի դրամահատութիւնը», Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Ժ., Պէյրուսթ, 1982-84, էջ 193:

HISTORIOGRAPHY IN THE VOLUMES OF
HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
(DEDICATED TO THE *REVIEW* ON ITS THIRTIETH ANNIVERSARY)
(Summary)

PETROS HOVANNISSIAN

The author sums up all the articles related to historiography thus far published in the 19 volumes of the *Haigazian Armenological Review* and groups them under the following categories: Ancient Times, Middle Ages, Modern Times and Contemporary Issues.

The author summarises the content of each article, and thus sheds light on several periods of Armenian history that the *Review* has featured: Pre-Urartian Armenia, the Artashesian Dynasty, the Arsacids, the Bagratunis, Arab-Armenian relations, and the Ottoman era. These have been covered quite closely in different articles of the *Review*. However, the author confirms that the main emphasis seems always to have been the Armenian Genocide. A lot has been published on this topic, analytic articles as well as documentaries, and reports.

In a separate section, the author mentions several other articles the *Review* has published devoted to subjects relevant to historiography.